



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10671



**ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈԼԽՈՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐՈՒՄ**

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЛИНГВИСТИКИ
Академии Наук
СССР

ԵՍՂԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.— ԻՐԱՍԿՎԱ, 1931

ЗКСМ5

4-72

12 AUG 2013

10671

3KCM5

4-72

24 SEP 2006

31-K

1116

631

09 DEC 2009

ՎՅԱԶԵՍԼԱՎ Կ.

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՊԱՅՔԱՐԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲԶԻԶՆԵՐԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ԵՄԵՂՈՒԹՅԱՆ
ԻՆՏԻՏՈՒՏ
ԵՄԵՂՈՒԹՅԱՆ
Ինստիտուտ
ՀԵՄԵՂՈՒԹՅԱՆ
ՍՍՏՐ

ԵՍԶԻՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

Քարգմ. Վ. Ս.



60659-67

Главлит № А-77184 Заказ № 3073 Тираж 6 000 экз.
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Ի. ՄԵԾ ԲԵԿՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ

ՀԱԿԱԿՈՒԼԱԿԱՅԻՆ ԿՈԼԵՈՉԱՅԻՆ ՀԵՂԵՂԸ

Նախքան գյուղական կոմյերիտ բլիշների վերահառուցման և նրանց աշխատանքի նոր բովանդակության մասին խոսելը, հարկավոր է պարզ ու հստակ պատկերացնել, թե այժմ ինչ է կատարվում գյուղում, ինչպիսի տնտեսական և քաղաքական փոփոխություններ և առաջիկա ցուցումներ են տեղի ունենում այնտեղ:

Գյուղատնտեսության զարգացման մեջ տեղի յե ունեցել մեծ, վճռական և անշրջադարձ բեկում: Բատրակ-չքավոր և միջակ մասսաներին կուսակցության գլխավոր գծի շուրջը համախմբելու համար թափված բազմամյա և համառ աշխատանքի ու սոցիալիստական արդյունաբերության խոշոր նվաճումների շնորհիվ, աշխատավոր գյուղացիության հսկայական մասը վճռական կերպով ընտրել է գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ուղին և վիթխարի, բազմամիլիոն զանգվածով, իր ճանապարհին փշրելով ու սրբելով կուլակի դիմադրությունը, քարուքանդ անելով իր դարավոր սովորությունները, ընթանում է դեպի կոլխոզները: «Գյուղի հիմնական շրջադարձը

դեպի սոցիալիզմ, — ինչպես ասում է ընկ. Ստալինը, — կարելի չէ արդեն ապահովված համարել:

Վերջին ժամանակներս ԽՍՀՄ-յան գյուղի կուլեկտիվացումը մեծ նվաճումներ է արել: Յեթե 1927 թ. հոկտեմբերին ամբողջ ԽՍՀՄ-յան մեջ կային 286,100 գյուղացիական տնտեսություն ընդգրկող 18,840 կոլխոզ, ապա առ 10 մայիսի 1930 թ. մենք արդեն ունենք 5,862,000 գյուղացիական տնտեսություն ընդգրկող 76,200 կոլխոզ: Այսպիսով, կոլխոզների մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսությունների քանակը այդ ժամանակամիջոցում աճել է ավելի քան 20 անգամ: Հիմնական հացահատիկային շրջաններում այժմ արդեն կուլեկտիվացված է գյուղացիական տնտեսությունների 40 — 50%-ը:

Կոլխոզների ցանքսադաշտը 994 հազար հեկտարից 1926/27 թ. հասել է 4,887 հազար հեկտարի 1929 թ., այսինքն աճել է համարյա հինգ անգամ, իսկ 1930 թ. կոլխոզների միայն գարնանացանը հասավ 30—35 միլ. հեկտարի: Նիժնե-Վոլժսկի կրայում և Հյուսիսային Կովկասում կոլխոզները ցանել են համարյա 2¹/₂ անգամ ավել, քան անհատականները:

Պարզ է, վոր այդ հաջողությունները յերկնքից չեն ընկել: Այդ հաջողությունները կուսակցությունը ձեռք է բերել շնորհիվ այն համառ նախապատրաստական աշխատանքի, վոր նա թափել է կոոպերացիայի ծավալման, չքավորություն կազմակերպման և միջակի հետ դաշինք ամրապնդելու վրա: Նա այդ նվաճումները ձեռք է բերել նաև շնորհիվ նրա, վոր մեկուսացրել է կուլակին, պրոպագանդով և գործով սովխոզների փորձի վրա ցույց է տվել սոցիալիստա-

կան խոշոր յերկրագործություն առավելությունները, կազմակերպել է մեքենատրակտորային կայաններ և գյուղատնտեսություն մեջ մտցրել է նոր տեխնիկա:

Արդեն այս տարվա գարնանացանի կամպանիայի ժամանակ կոլխոզները փայլուն կերպով ապացուցեցին իրենց կենսունակությունը և առավելությունը հանդեպ անհատական տնտեսությունների. նրանք կազմակերպված կերպով, ավելի շուտ, քան անհատականները, ծավալեցին գարնանացանը և համարյա ամենուրեք լիովին իրագործեցին ցանքսադաշտերի ընդարձակման նախանշված պլանները:

Այս բոլորը կարող էր տեղի ունենալ միայն շնորհիվ նրա, վոր կուսակցությունը և բանվոր դասակարգը աշխատում էին խիստ լարվածությամբ և իրենց ամբողջ ուժն ու յեռանդը նվիրել էին կոլխոզային շինարարության: Այսպես, որինակ, կոլխոզներում մշտապես աշխատելու համար մոբիլացված են 25 հազար ամենալավ և կոփված բանվոր. սկզբում նախատեսված 27 միլիոն ուրբուր փոխարեն կենտկոմը վորոշել է կոլխոզների վարկավորման համար այս տարի բաց թողնել 500 միլիոն ուրբուր: Ստալինգրադում ամառս ավարտվեց Տրակտորչենի կառուցումը, վորը արդեն հունիսից սկսել է աշխատել և բաց է թողնելու տարեկան 50 հազար տրակտոր բացառապես կոլխոզների ու սովխոզների համար:

«Կուսակցությունը ձեռք բերեց վճռական բեկում կուլեկտիվացման գործում նաև շնորհիվ նրա, վոր ջախջախվեցին ինչպես հակահեղափոխական տրոցկիզմը, վորի քաղաքականությունը անխուսափելիորեն տանում է դեպի գյուղացիության հիմնական մասսաների

հետ ունեցած դաշինքի խզումը, այնպես էլ և աջ ուղիւնխտները, վորոնց քաղաքականությունն էր՝ հրաժարվել յերկրի ինդուստրացումից, վոր անց ե կացնում կուսակցությունը, հրաժարվել Սովխոզների և կոլխոզների զարգացումից և դիմել նահանջի կուլակության հանդեպ»*:

Համատարած կոլեկտիվացման հետ մեկտեղ և նրա հիման վրա տեղի յե ունենում կուլակության վերջնական վոչնչացում, վերացում վորպես դասակարգի, վոչնչացում, վորը արմատախիլ ե անում կապիտալիզմի մնացորդները մեր յերկրում:

Կուսակցությունը միայն այս տարի կարողացավ կուլակության շահագործողական ձգտումները սահմանափակելու քաղաքականությունից անցնել՝ կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականության:

Ի՞նչու միայն այս տարի և վոչ մի յերկու յերեք տարի սրանից առաջ, ինչպես դա այն ժամանակ առաջարկում եյին տրոցկիստները: — Այն պատճառով, վոր մի յերկու յերեք տարի սրանից առաջ տակավին չկային դրա համար անհրաժեշտ պայմանները, դեռ չկար այնպիսի տնտեսական բազա, վորը մեզ հնարավորություն տար՝ կուլակին դուրս վոնտել գյուղատնտեսական արտադրությունից:

Յեթե 1927/28 թվին կուլակը շուկա յեր հանում 21.911 հազար ցենտներ հաց, իսկ կոլխոզները և սովխոզները — միայն 5.736 հազար ցենտներ, այսինքն կուլակից չորս անգամ քիչ, ապա հիմա պատկերը

* Ընկ Յակովլևի թեզիսներից, XVI համագումարին:

ընդորովին այլ ե. այս աշնան մեր սովխոզները և կոլխոզները տալիս են մեզ վոչ պակաս, քան 65.573 հազար ցենտներ ապրանքային հաց, այսինքն յերեք անգամ շատ նրանից, ինչ շուկա յեր հանում կուլակը:

Այժմ մենք կարող ենք կուլակի արտադրությունը վոչ միայն փոխարինել, այլև դա ծածկել կոլխոզների և սովխոզների արտադրությամբ: Կուլակից խլված և կոլխոզներին տրված ու կուլտուրական կերպով և կազմակերպվածորեն մշակված հողը ավելի շատ բերք և մուտք ե տալու:

Յեվ հենց այդ ե այն գլխավոր պատճառը և պայմանը, վոր թույլ ե տալիս կուսակցության՝ համատարած կոլեկտիվացման շրջաններում վերացնել կուլակությունը վորպես դասակարգ: Մնացած շրջաններում, վորտեղ կոլխոզային շարժումը սակավին չի ընդգրկել չքավոր-միջակ տնտեսությունների մեծամասնությունը, ուժի մեջ ե մնում կուլակային-կապիտալիստական տարրերը անխնայորեն դուրս մղելու և նրանց շահագործողական ձգտումները սահմանափակելու լոգունգը, վորպես ոժանդակող լոգունգ, վորովհետև այդ շրջաններում դեռ չեն հասունացել կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականության անցնելու պայմանները:

«Կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու լոգունգը — ասում ե ընկ. Ստալինը — դարձել ե գլխավոր լոգունգ, իսկ համատարած կոլեկտիվացում չունեցող ռայոններում կուլակությունը սահմանափակելու լոգունգը գլխավոր լոգունգի նկատմամբ ինք-

նուրույն լոգունգից դարձել է նպաստող, ոժանդակող լոգունգ, վորը հեշտացնում է այդ շրջաններում պայմաններ ստեղծելու գլխավոր լոգունգի համար, այսինքն կուլակութունը վորպես դասակարգ վերացնելուն»:

Համատարած կուլեկտիվացման շրջանի և այդպիսին չունեցող շրջանի պայմանները միատեսակ չեն:

Հարկավոր է հասկանալ, վոր կուլակութունը վորպես դասակարգ վերացնելը հնարավոր է միայն ինչպես մասսայական համատարած կուլեկտիվացման անխղելի մաս և հետևանք: Միայն համատարած կուլեկտիվացումը, վորը վոչնչացնում է կուլակային ստրկացումը և կուլեկտիվ ու կազմակերպված աշխատանքի հիման վրա բարձրացնում է գյուղացիական տնտեսութունները, կարող է վերջապես խլել կուլակության հենց արմատները և վոչնչացնել այն, վորպես առանձին տնտեսական միավոր, վորպես դասակարգ:

Կոլխոզային արտադրության ծավալումը և լավագույն կազմակերպումը ապահովելու յե կուլակության լիակատար և վերջնական վերացումը վորպես դասակարգ:

Կուլակության վերացման միայն այդպիսի աշխատանքը կարող է լինել հաստատուն և խակապես չի թույլ տա, վոր կուլակը վերստին վտաքի կանգնի:

Կոլխոզների և սովխոզների մասսայական շարժումը խորհրդային Միության մեջ և համատարած կուլեկտիվացման հիման վրա սկսած կուլակության վերացումը վորպես դասակարգի, փոփոխում են խՍՀՄ-յան տնտեսության մեջ գտնվող զանազան տնտեսական ուկլադների (ձևերի) փոխհարաբերությունները, վորովհետև «արդյունաբերության ներկայացրած սոցիալիստական ուկլադի վրա ավելանում է սոցիալիստական սեկտորը գյուղատնտեսության մեջ, վորը (սեկտորը) դուրս է մղում կապիտալիստական ուկլադը»*:

«Սոցիալիստական հարաբերությունները խՍՀՄ մեջ, վորոնք մինչև հիմա հենվում էին բացառապես սոցիալիստական արդյունաբերության վրա, այսուհետև սկսում են հենվել նմանապես և գյուղատնտեսության մեջ արագորեն աճող սոցիալիստական սեկտորի վրա (խոշոր արտադրությունը կոլխոզների և սովխոզների ձևով)»:**

Կոլխոզը դարձել է պրոլետարիատի տնտեսական և քաղաքական ամրոցը, պրոլետարիատի, վորը և՛ գյուղում, և՛ քաղաքում կառուցում է սոցիալիստական հասարակության հիմքը: Կոլխոզները հանդիսանում են պրոլետարիատի վստահելի հենարանն այն պայքարում, վորը մղվում է գյուղը սոցիալիստականորեն վերակառուցելու համար, անհատական գյուղը կոլխոզային գյուղի վերածելու համար:

Կոլխոզները պրոլետարիատի քաղաքական հենարանն են նրա պայքարում ընդդեմ կուլակության,

* Ընկ. Յակովևի թեզիսները XVI կուսհամագումարին:

** Նույն տեղ:

վորը կոլխոզները թշնամին եւ և իր ամբողջ ուժերով պայքարում եւ կոլեկտիվացման դեմ:

Կոլխոզներումն եւ սկսվում անհատական մանր սեփականատերերի վերածումը խոշոր սոցիալիստական տնտեսութեան աշխատողների, այնտեղ են սկսում դրսևորվել արտադրական նոր հարաբերութեւնները, կոլեկտիվ հարաբերութեւնները:

«Համապատասխան այս բոլորի, այժմ նոր ձևով եւ գրվում խորհրդային իշխանութեան հենարանի հարցը գյուղում: Այսօրվանից ԽՍՀՄ-յան կարևորագույն հացահատկային շրջաններում գյուղը բաժանվում եւ յերկու հիմնական մասի — կոլխոզնիկների, վորոնք հանդիսանում են խորհրդային իշխանութեան իսկական և ամուր հենարանը և վոչ կոլխոզնիկների՝ չքավորներից և միջակներից, վորոնք առայժմ դեռ չեն ուզում մտնել կոլխոզ, սակայն վորոնց կոլխոզների մասսայական փորձը համեմատաբար ամենակարճ ժամանակամիջոցում անկասկած համոզելու յե, վոր անհրաժեշտ եւ բռնել կոլեկտիվացման ուղին»:

Նոր ձևով եւ գրվում հարցը միջակի, վորը հաստատուն կերպով մտել եւ կոլխոզ և վճռականորեն շուռ եւ յեկել դեպի կոլեկտիվացումը, դեպի սոցիալիզմը: Կոլխոզ մտած միջակը յերեկվա դաշնակցից այսօր չքավոր-կոլխոզնիկի հետ միասին դարձել եւ մեր հենարանը:

Ի՞նչու յե կուսակցութեւնն այդպես դնում հարցը միջակ-կոլխոզնիկի հետ իր ունեցած վերաբերմումքի մասին:

Վորովհետև կոլեկտիվ արտադրութեան պայմաններում միջակ-մանր-սեփականատերը դառնում եւ այլ

սոցիալական տիպ, վորն արյամբ շահագրգռված եւ սոցիալիստական տնտեսութեան ձևերից մեկը հանդիսացող կոլխոզի հաջող զարգացմամբ:

Ի՞նչն եւ դրան նպաստում:

Ամենից առաջ այն, վոր կոլխոզ մտած միջակը իր արտադրութեան գլխավոր միջոցները հանձնում եւ հանրային ոգտագործման, դադարում եւ լինել անհատական-արտադրող և մասնակցում եւ հանրային աշխատանքին, հանրային արտադրութեան, միջերձների հանրային բաշխման կոլեկտիվ կարգապահութեան:

Բացի դրանից, փորձը վկայում եւ այն մասին, վոր ներկայումս արտելում գտնվող միջակը անցել եւ դասակարգային պայքարի լուրջ փորձաշրջան, յեթե անգամ վերցնենք վերջին փոքր ժամանակամիջոցը: Այդ պայքարի ընթացքում, իհարկե, նա յեղել եւ պրոլետարիատի կողմը:

«Նա մտել եւ կոլխոզ կուլակութեան և սուրբ յեկեղեցականների ախտիվ դիմադրութեան պայմաններում: Գտնվելով կոլխոզում, նա յենթարկվում եր կուլակային ագիտացիային, վորի նպատակն եր համոզել նրան՝ դուրս գալ կոլխոզից: Լինելով կոլխոզնիկ, նա ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում եր ապակուլակացման: Անուղղակի մասնակցութեւնն արտահայտվում եր նրանում, վոր կուլակի հողը և արտադրութեան միջոցները հանձնվում եյին կոլխոզին, և նա այդպիսով դառնում եր «ուրիշ սեփականութեան» տեր:

Կոլխոզներից դուրս գալու ժամանակ նա, չնայած նրան, վոր այդ շրջանում կուլակութեւնը ծավալել եր առանձնապես ուժեղ ագիտացիա, կոլխոզը չթողեց)

նրանից չհեռացավ: Նոր հողաշինարարութեան ժամանակ, կոլխոզներէց հեռանալու հետ կապակցված, կուլակութեանը չզանգաղեց ագրտացիայի նոր հեղեղ բարձրացնել կոլխոզների դեմ, անհատական տնտեսութեանները գրգռելով կոլխոզների դեմ: Յե՛վ այդ գրոհն ել կոլխոզ մտած միջակը յետ տվեց:

Յե՛վ, վերջապես, ցանքսի ժամանակ կոլխոզնիկները, նրանց թվում և միջակը, կարողացան բացառիկ ծանր պայմաններում նշանակալիորեն ընդլայնել ցանքսադաշտը, բարձրացնել աշխատանքի արտադրողական ուժը, մի շարք շրջաններում դեռ կիրառելով նաև հարվածայնութեան և սոցմրցման մեթոդները:

Բնական է, վոր այդ պայմաններում արտելում գտնվող միջակը հանդիսանում է Սորհրդային իշխանութեան ամուր հենարանը» («Правда» 2/VI-1930թ. ընկ. Ֆեյզինի հոդվածից):

Շատ ընկերներ անհանդիստ կերպով հարցնում են. «Իսկ միջակ-կոլխոզնիկի հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցի նոր գրամմը չի՞ վերացվում արդոք լենինյան լոզունգը չքավորի վրա հենվելու մասին: Դա արդոք լենինիզմի վերանայում չէ՞»:

— Հարկավոր է հասկանալ, — ասում է ընկ. կազանովիչը, — վոր Լենինն այդ ֆորմուլան գրել է այն ժամանակ, յերբ անհատական տնտեսութեանները կազմում էին 99%: Միանգամայն պարզ է, վոր 99% անհատական տնտեսութեանների առկայութեան պայմաններում հենարանը հանդիսանալու յեր անհատական-չքավորը, իսկ միջակը — դաշնակից, վրովհետև այնտեղ վոչ մի բաժանում ըստ տնտեսական նոր կատեգորիաների, ըստ նոր տնտեսական տիպի չկար,

մեծամասնութեանը կազմում էին անհատական տնտեսութեանները: Այսոր կացութեանը փոխվել է:

Այսոր սկսվում է իրականացվել մեծ պլանը Լենինի, վոր նախատեսել էր կոլխոզների մասսայական կազմակերպման մոմենտը:

Դա նշանակում է արդոք, վոր Լենինի ֆորմուլան — հենվել չքավորի վրա, դաշնակցել միջակի հետ, պայքարել կուլակի դեմ — մենք չենք ընդունում: Յերբեք, Այնտեղ, ուր կոլխոզներ չկան, ուր մեծամասնութեանը անհատականներն են, այնտեղ անհատական-չքավորը առաջվա նման մնում է մեր հենարանը:

Միջակը յեղել է և է պրոլետարիատի դաշնակիցը, և նա, ով միջակի նկատմամբ թույլ է տալիս բռնութեան, նա գործում է կուլակների ոգտին, նրա գործակալների — աշերի և հակահեղափոխական տրոցկիզմի ոգտին»:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԱՓԻՑ ԴՈՒԲՍ ԱՇԵԱՏԵՑԻՆ
ՏԱՔԱՅԱԾ «ԿՈՒԼԵԿՏԻՎԱՅՆՈՂՆԵՐԸ»

Կոլեկտիվացման և դարնանացանի նախապատրաստական «յեռուն» աշխատանքի ժամանակ հսկայական հաջողութեաններ հետ մեկտեղ Սորհրդային Միութեան շատ շրջաններում թույլ տվեցին ամենակոպիտ խոշոր ազավազումներ կուլսակցութեան քաղաքականութեան խնդրում:

Այդ գերակորումները կայանում են նրանում, վոր շատ տեղերում չափից դուրս տաքացած կոլեկտիվացնողները, թեթևամտութեամբ և հանցագործորեն ընկնելով իրենց գյուղերի և շրջանների կոլեկտիվաց-

ման փքված «տոկոսներին» յետևից, այս և այն տեղերում «հաջողեցրել եյին» մի շարքովա ընթացքում կոլեկտիվացումը 10%-ից «հասցնել» 96%-ի, թխում եյին կոլխոզներ, ստեղծում այգւպիսիներ մերկ վարչականությամբ, համարյա հրամանով, չքավոր-միջակ մասսաների մեջ չտանելով վոչ մի լուրջ բացատրական աշխատանք և չհոգալով կուսակցության շուրջը բատրակներին և չքավորներին համախմբելու մասին: Մեծ սխալ եր և այն հանգամանքը, վոր շատ տեղերում միջակի հետ վարվում եյին անուշադիր կերպով և նրան հեռացնում եյին, չեյին թույլ տալիս մասնակցելու կոլխոզչինարարության ղեկավարության:

Քյալագյոզները խախտել եյին կոլխոզային շինարարության կամավորության սկզբունքը և հենց դրանով ձախողել նրա հաջողությունը և հեղինակությունը գյուղացիական մասսաների մոտ: Մի շարք շրջաններում կամավորությունը փոխարինվել եր նրանով, վոր ապակուլակացման սպառնալիքով, ընտրական իրավունքներից զրկելու սպառնալիքով ստիպում եյին մտնել կոլխոզ: Դրա հետևանքով «ապակուլակացվածների» թվում յերբեմն ընկնում եր միջակների և նույնիսկ չքավորների մի մասը»^{*}

Սամարսկայի ոկրուզի Սպասսկ գյուղում կոլխոզ ստեղծող «ագիտատորները» գյուղացիներին «համոզել են» նրանով, վոր յեթե նրանք չմտնեն կոլխոզ, ապա նրանցից խլելու յեն ձիյերը, աշնանացանը և տալու յեն կոլխոզին:

Սպասսկի շրջանի Պոտուլովսկա գյուղում կոլխոզ են քշել հողաբաժիններից զրկելու սպառնալիքով: Հա-

* Համ. ԿԿ(բ) ԿԿ 1930 թվի մարտի 15-ի վճռումից:

մառ դիմադրություն ցույց տվող չքավորներին և բատրակներին անվանել են «պողկուլաչնիկ», «խորհրդային իշխանության թշնամի», իսկ հետո հասել են նրան, վոր բոլոր կոլխոզ մտնողներին առաջարկել են՝ մտնել անբաժան ֆոնդ իրենց գույքի, ունեցվածքի 75-ից մինչև 100%-ը:

Բուզուլուկի շրջանում վարչական կարգով գրել են կոլխոզների մեջ ամբողջ գյուղեր, սպառնալով, վոր «չհնազանդվողները» չեն ստանա վոչ հաց և վոչ սերմ: Բուզուլուկյանսկի ոկրուզի Ուբեյկին և Մորգովա-Սոբելյակով գյուղերում կոմյերիտներն այսպես են «համոզել» գյուղացիներին. «Յեթե չմտնեք կոլխոզ, կազակուլակացնենք, կամ, ավելի վատ, կուղարկենք Սիբիր»:

Բուզուլուկսկի շրջանի Սուխորեչկա գյուղում կոմյերիտակաները լիազորների հետ միասին գիշերով գաղտնի կերպով ցանկապատերից բարձրացել և մտել են գյուղացիների գոմերը և անասունները քշել տարել ընդհանուր գոմերը, վորովհետև կամավոր կերպով վոչ վոք չի համաձայնվել իր անասունները տալ:

Միջին-Վոլգայի յերկրամասի առանձին տեղերում կոլխոզներ կազմակերպելու համար հրավիրված ժողովներում «կազմակերպիչները բոլորին առաջարկել են՝ սով կոլխոզին դեմ ե» թող զրվի առանձին ցուցակում, իսկ հաջորդ օրը Սպասսկոպր հայտարարել ե, վոր «վոչ կոլխոզնիկներին վոչ մի ապրանք չի տրվելու»:

«Սյսպիսով, խախտվել ե Լենինի հայտնի ցուցմունքն այն մասին, վոր կոլխոզները կարող են լինել կենսունակ և կայուն միայն այն դեպքում, յեթե

ծնունդ առնեն կամավորութեան հիման վրա: Խախտված է մեր կուսակցութեան XV կոնֆերենցիայի վորոշումը այն մասին, վոր կոլխոզներ կազմակերպելիս անթուլատելի յե գործադրել բռնի միջոցներ: Խախտված է ԽՍՀՄ-յան Ժողկոմխորհի և Կենտգործկոմի հաստատած գյուղատնտեսական արտելի կանոնադրութիւնը, վորտեղ ուղղակի ասված է, վոր այսինչ գյուղի բատրակները, չքավորները և միջակները կհամավոր կերպով միանում և կազմում են գյուղատնտեսական արտել»:^{*}

Կուսակցութեան քաղաքականութեան այդ բոլոր աղավաղումները և կոպիտ խախտումները այժմ հանդիսանում են «կոլխոզային շարժման հետագա զարգացման հիմնական արգելակը, ուղղակի ոգնում են մեր դասակարգային թշնամիներին, կուսակցութեան թշնամիներին և հող են պատրաստում կուսակցութեան միջի աջ ելեմենտների ուժեղացման համար... Կոլխոզային շարժման հետագա արագ աճումը և կուլակուլութիւնը վորպես դասակարգ վերացնելն՝ առանց այդ աղավաղումների անհապաղ լիկվիդացիայի՝ անհնարին են» (նույն տեղ):

Մեր դասակարգային թշնամիները, կուլակները, հմտորեն ոգտագործեցին տեղի ունեցած աղավաղումները նրա համար, վորպեսզի շփոթութիւն, լուրջ տատանումներ առաջ բերեն միջակ գյուղացիութեան վորոշ շերտերի մեջ և այդ տատանումների միջոցով իրենց գործը տեսնեն: Կուլակն ոգտագործեց թույլ

^{*} Համ. ԿԿ(բ) Կենտկոմի 1930 թ. մարտի 15-ի վորոշումից:

տված սխալներն ու աղավաղումները նրա համար, վորպեսզի լայնածավալ հակահարձակում գործի մեր դեմ, կոլեկտիվացման դեմ և վիժեցնի գարնանացանը: Հետևանքն այն յեղավ, վոր վորոշ տեղերում տեղի ունեցավ նշանակալի և անգամ մասսայական հեռացում կոլխոզներից:

Կուսակցութիւնը վճռական պայքար մղեց այդ սխալների, գերակորումների և դրանց կրողների դեմ, վորովհետև այդ սխալները և գերակորումները խորթ են կուսակցութեան քաղաքականութեան: Այժմ հիմնականում այդ սխալներն ուղղված են «Յեթե կուսակցութեան Կենտկոմը իր ժամանակին չուղղեր այդ սխալները (մարտի և ապրիլի վորոշումներով, ընկ. Ստալինի հոգվածներով), ապա դա կարող եր սպառնալ գյուղատնտեսութեան կոլեկտիվացման գործին և խորհրդային պետութեան հենց հիմքին — բանվորագյուղացիական դաշինքին» (ընկ. Յակովլևի թեզիսները XVI կուսհամագումարին):

Մեր կուսակցութեան Կենտրոնական կոմիտեյի փորձված ղեկավարութեան իր ժամանակին ձեռք առած խիստ միջոցները, վորոնք անխնա հարվածեցին սխալների և գերակորումների կրողներին, ոգնեցին վերականգնել մի շարք ուայոններում խախտված ճիշտ լենինյան հարաբերութիւնը միջակի հետ, ոգնեցին ամրապնդել կոլխոզային շարժման նվաճումները և դրանով ապահովեցին կուլակի վրա վճռական հարձակում գործելու հետագա ծավալումը և կուլակութիւնը վորպես դասակարգ վերացնելու անշեղ իրականացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա և միջակի հետ

79-65909



Իր աշխատանքը կոլխոզային շարժման դեմ կուլակը տանում է նաև կուսակցության միջի իր քաղաքական գործակալների — աջ ոպորտունիստների միջոցով: Կուլակի դիմադրության ուժեղացման հետ մեկտեղ ուժեղանում է և աջ ոպորտունիզմը կուսակցության մեջ:

Դեռ յերեկ աջ ուկլոնիստները փրփուրը բերնին ձգնում էին կուլակին թույլ տալ մտնել կոլխոզների մեջ, ապացուցում էին, վոր համատարած կոլեկտիվացման շրջաններում վոչ մի կուլակային վտանգ չկա և հենց դրանով ոգնեցին կուլակին՝ այս և այն տեղ սոզոսկալ կոլխոզների մեջ, քայքայել դրանց, իր կողմը քաշելով միջակին, և պայթեցնել կոլխոզները ներսից:

Դեռ յերեկ եր, վոր աջ ոպորտունիստները դեմ էին դուրս գալիս կոլխոզներում բաարակներին և չքավորներին կազմակերպելուն և դրանով նպաստում էին միջակի տատանումների ուժեղացման: Իսկ այժմ նրանք փորձում են ոգտագործել կուսակցության վճռական պայքարը կոլխոզային շարժման մեջ և ապակուլակացման գործում տեղի ունեցած աղավաղումների դեմ նրա համար, վորպեսզի արատավորեն, վիժեցնեն կուսակցության գլխավոր գիծը և ամենաանհեթեթ լուրեր են տարածում այն մասին, վոր իբր թե «կուսակցությունը յեա-յեա է քաշվում կոլխոզների և սովխոզների վրա հենվելուց», վոր իբր թե «կուսակցությունը քիչ-քիչ ձեռք է քաշում կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու լոզունզից, համատարած կոլեկտիվացման շրջաններում ապակուլակացումն իրականացնելուց և անցնում է

գյուղի կապիտալիստական տարրերի շահագործողական ձգտումները սահմանափակելու և դուրս մղելու լուրենգին»:

Աջերն ասպարեզ բերին մի թեորիա, վորի համաձայն կոլխոզային շարժումը պետք է ընթանա իրեն-իրեն, «ինքնահոս» կերպով: Այդ բանում նրանց պաշտպանում են և «ձախ» քյալլադյոզները:

Ըստ եյուլթյան այդ թեորիան ուրիշ վոչինչ չի նշանակում, քայքայեթե պայքար կոլխոզային շարժման դեմ նոր պայմաններում և իրենից ներկայացնում է հրաժարումն պրոլետարիատի դեկավարող դերից գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

«Աջերը կուլակի նման այժմ խոսում են այն մասին, վոր կոլխոզային շարժման մեջ տեղի ունեցող աղավաղումները կախում ունեն կուսակցության գլխավոր գծից: Պայքարն աղավաղումների դեմ նրանք աշխատում են ոգտագործել նրա համար, վորպեսզի կուսակցությունը շեղեն, շուռ տան իրենց աջ-ոպորտունիստական կուլակային ուղու վրա, կոլեկտիվացման արագ տեմպերից, կուլակի վրա հարձակվելուց հրաժարվելու ուղու վրա: Աջը կոչ է անում նահանջել, իբր թե, յե՛լնելով ընդհանուր գործի շահերից, միջակի շահերից, այնինչ իրականում նա պաշտպանում է հարուստ-կուլակային՝ վերնախավը: (1/IV 1930 թ. „Правда“):

Այսպես, որինակ, Սամարի ոկրուզի Սպասսկի շրջանի գործկոմի նախագահ և կուսակցության շրջկոմի բյուրոյի անդամ Տորգուշնիկովը բոլոր ժողովներում բղավելիս և պնդելիս է յեղել, վոր պետք է «ուշադրու-

թյամբ և խնամքով» վարվել հարուստների հետ, վոր պետք է նրանց «յետ չմղել», այլ, ընդհակառակը, վորպես «անփոխարինելի մասնագետներ» կանգնեցնել կոլխոզների տնտեսական-հրամանատարական դիրքերի վրա:

Իսկ այդ «անփոխարինելի մասնագետները», մի կերպ մտնելով վարչության մեջ, շատ շուտ իրենց ձեռքն են առնում կոլխոզը, բոլոր պատասխանատու տեղերում նստեցնում են «իրենց մարդկանց», հենվում են կոլխոզի հարուստ, «պինդ մասի» վրա, արհամարում են բատրակներին և չքավորներին, վերջիններին հեռացնելով դեկավարությունից, նրանց տալով ավելի սև և ավելի կեղտոտ աշխատանքը, մի բան, վոր և պատահեց Սպասսկի «Գիգանտ» կոլխոզում, այսինքն այն շրջանում, վորտեղ աշխատում էր Տորգուշնիկովը:

Այդ «Գիգանտի» վարչության մեջ սողոսկում է վոմն Սավին, հարուստ, նախկին սպիտակ-գվարդիական, կուլակային արտելի կազմակերպող: Նա կարողանում է զրավել վարչության նախագահի տեղակալի և գյուղատնտեսության վարչի պաշտոնները և փաստորեն իր ձեռքն առնել ամբողջ կոլխոզը, ըստ վորում Տորգուշնիկովը համակրում և ոգնում է նրան:

Ահա թե ինչու, պայքարելով կուսակցության գծից տեղի ունեցող թեքումների դեմ, հարկավոր է գլխավոր կրակն ուղղել դեպի աջ, կուսակցության մեջ գտնվող կուլակային գործակալների դեմ: Առանց կուսակցության միջի աջ ոպորտունիզմը հաղթահարելու չի կարելի ջախջախել կուլակին:

Անխնա պայքար մղելով աջ թեքման դեմ, վորպես գլխավոր վտանգի դեմ, անհրաժեշտ է նմանապես վճռական կերպով պայքարել «ձախ», հակամիջակային «խոտորումների» դեմ, վորոնք ևս շուր են լցնում կուլակային ջրաղացին:

«Ձախ խոտորողների» առանձնահատուկ գիծը նրանց համար բնութագրական հանդիսանում է մանրբուրժուական կամազրկությունը, հիստերիկականությունը և այն, վոր նրանք կոլեկտիվացման և այլ միջոցառումների իրականացման ժամանակ մասսաների մեջ իսկական աշխատանք տանելը փոխարինում են վարչական ճնշումով:

Այդ «ձախերը», վոր դեռ յերեկ, ահաբեկ անելով գյուղացուն, աշխատում էին մի շաբաթվա մեջ հասնել հարյուր տոկոսային կոլեկտիվացման և ապակուլակացնում էին միջակին, այսոր արդեն մոլորվել են, իրենց գլուխը կորցրել և յերևակայելով, վոր կուսակցությունը նահանջում է, աջերի հետ միասին բղավում են կուսակցության պարտության, նահանջի և իբր թե միջակի հետ տեղի ունեցած ապագոդման մասին, խուճապ են բարձրացնում և պատրաստ են տեղի տալու կուլակին, վորը ձգնում է քայքայել և պայթեցնել կոլխոզները, պատրաստ են առանց ճակատամարտի պայքարի դաշտը թողնել կուլակին:

Ահա ձեզ որինակ, գերակորումների և կուլակների աշխատանքի շնորհիվ Սամարի ոկրուզի Սպասսկի շրջանի Պոտուլովկա գյուղում կոլխոզն սկսում է քայքայվել: Վերին աստիճանի ադմիհանույզ ընդհանուր ժողովում, հարուստ վերնախավի և խաբված չքավորության ճնշման տակ, շրջագործկոմի լիագոր Սանկլե-

վիչը շփոթվում է, բառիս բուն իմաստով ընկնում է ծնկները վրա, իր և կուսակցութեան վրա յե վերցնում բոլոր սխալները և գերակորուսները (նույնիսկ այն սխալներն ել, վոր ինքը չի արել) և համաձայնվում է ժողովի վորոշման հետ (մինչև անգամ բանաձևն ել ինքն է գրում) կոլխոզի ամբողջ գույքի անհապաղ բաժանման մասին: Նույն գիշերը, ժողովից անմիջապես հետո, գույքը և անասունները բաժանբաժան են արվում, ըստ վորում ամեն մարդ իրեն է քաշում ինչ վոր ձեռքն է ընկնում:

Կուսակցութեանը և կոմյերիտիութեանը, պայքարելով աղավաղումների, թեքումների ու գերակորումների դեմ, ինչի վրա պետք է կենտրոնացնեն իրենց գլխավոր ուշադրութեանը:

Ներկայումս կուսակցութեան գլխավոր անելիքը գյուղում հետևյալն է. ամբապնդել կոլեկտիվացման ասպարիզում ձեռք բերած նվաճումները, ամենաուժեղ և լարված պայքար մղել ցանքսագաշտերի ընդլայնման պլանները կատարելու, գերակատարելու և գյուղատնտեսութեան ասպրանքային պրոդուկցիան ավելացնելու համար, բատրակ, չքավոր և միջակ մասսաներին մոբիլիզացնել այդ խնդիրների լուծման շուրջը և միաժամանակ շարունակել համառ աշխատանքը գյուղացիներին կամավոր սկզբբունքների հիման վրա գրավել կոլխոզների մեջ և ամբապնդել գոյութեան ունեցող կոլխոզները:

Համատարած կոլեկտիվացումը, վորպես կուսակցութեան գլխավոր գիծ գյուղում և կուլակութեան լիկվիդացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա, վորպես կուսակցութեան գլխավոր լոզունգ, ներկայումս մնում են անփոփոխ:

Այստեղ վոչ մի նահանջ չկա, չի յեղել և չի լինի:

Վոչ վոք այլևս չի կարող մեր գյուղը շեղել դարգացման սոցիալիստական ուղուց, վորով ընթանում են գյուղացիութեան բազմամիլիոն մասսաները կուսակցութեան դեկավարութեան տակ: Թող այս լավ հիշեն թշնամիները:

II. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՎԱԶՄՎԵՆ
ԿՈՄՅԵՐԻՏ ԲՁԻՋՆԵՐԸ ԿՈԼԻՈՋՆԵՐՈՒՄ

ՎԵՐԱՎԱԶՄՎԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ

Գյուղի սոցիալիստական վերակառուցման նոր խնդիրները, վորոնց առաջադրել են համատարած կոլեկտիվացումը և կուլակոլթյունը վորպես դասակարգ վերացնելը, կոմյեքիտմիության գյուղական կազակերպություններին պարտադրում են՝ անհապաղ վերակազմվել, դրա համար ձեռք առնելով ամենավճռական և մարտական միջոցները, վորովհետև հակառակ դեպքում նրանք շարտվելու յեն յետ և քարշ են գալու դեպքերի պոչից:

Հարկավոր ե ուղղակի ասել, վոր կոմյեքիտմիության գյուղական բջիջների մեծամասնության աշխատանքի բովանդակությունը և կազմակերպչական կառուցվածքը չեն համապատասխանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման արագ տեմպերին և նոր, վերին աստիճանի բարդ խնդիրներին և չեն ապահովում կոլխոգային յեքիտասարդության վերջերս բուռն կերպով աճող ակտիվության լիակատար ոգտագործումը, այդ ակտիվությունը սոցիալիստական հունի մեջ դնելը: Ի՞նչու:

Վորովհետև «կոլխոգների և սովխոգների կոմյեքիտմիությունները չեն վերակազմել իրենց աշխատանքն ու

ղեկավարությունը և մեծ մասամբ շարունակում են աշխատել հին բովանդակությամբ, հին մեթոդներով»:

Կոմյեքիտմիության շատ (յեթե վոչ բոլորը) շրջագործկոմներ, անգամ համատարած կոլեկտիվացման շրջաններում, մինչև հիմա յել դեռ հաշվի չեն առնում կոլխոգային բջիջների աշխատանքի առանձնահատկությունները և մեքենայորեն, «ըստ իներցիայի» գյուղական բջիջները ղեկավարելու հին ձևերը կիրառում են և կոլխոգային բջիջների նկատմամբ:

Այդ պատճառով ել կոմյեքիտմիության աշխատանքի անհապաղ վերակառուցման խնդիրը համատարած կոլեկտիվացման շրջաններում ստանում ե բացառիկ կարևոր և խորը սկզբունքային նշանակություն:

Իսկ ի՞նչպես պետք ե վերակազմվել:

Կոմյեքիտմիության կազմակերպչական վերակառուցումը կոլխոգներում պետք ե կատարվի արտադրական սկզբունքով, ճիշտ այնպես, ինչպես ֆաբրիկ-գործարանային կազմակերպություններում:

Շրջկոմ, յենթշրջկոմ, կոլխոգային բջիջ — անա կոմյեքիտմիության կազմակերպության հիմնական ողակները համատարած կոլեկտիվացման շրջաններում:

Ավելի պարզության համար պատկերացնենք մեզ մի վորևե շրջան: Անվանենք այդ շրջանը, ասենք, հոկտեմբերյան:

Այսպես, յենթադրենք, վոր այդ շրջանում կան 28 գյուղխորհուրդ և 3 մեքենա-տրակտորային կայան: Յենթադրենք, վոր համարյա բոլոր կոլխոգները բաժանվում են փոքրերի (20-ից մինչև 100 տնտեսություն յուրաքանչյուրում) և խոշորների (100-ից

ավելի տնտեսություններ): Յուրաքանչյուր կոլխոզ կազմում է մի գյուղ: Բացի դրանից, յենթադրենք, կա մի կոլխոզ-գիգանտ 60 հազար անդամով և բաժանված է 12 արտադրական մասի-գյուղի, վորոնք ունեն 5 հազարական հեկտ. հող և 100 — 120-ական տնտեսություն:

Կոմյերիտական բլիշները կազմակերպված են կոլխոզներին և «Գիգանտի» արտադրական մասերին կից: Բլիշները ղեկավարելու և սպասարկելու հարմարության համար շրջկազմակերպությունը բաժանվում է յենթաշրջկոմներին:

Յենթաշրջկոմները ընդամենը չորս են, յեղած մեքենա-տրակտորային յերեք կայանի և մեկ կոլխոզ-գիգանտի քանակի համաձայն:

Առաջին մեքենա-տրակտորային կայանը, յենթադրենք, միացնում է յոթ գյուղխորհուրդ և նրան կից ստեղծված է ՀամԼԿՅԵՄ-յան յենթաշրջկոմ, վորը սպասարկում է այդ գյուղխորհրդների շրջանում գտնվող բլիշները: Յերկրորդ յենթաշրջկոմը կազմակերպված է սպասարկելու յերկրորդ մեքենա-տրակտորային կայանի գործողության շրջանում գտնվող իննը բլիշը: Յերրորդ յենթաշրջկոմը գտնվում է յերրորդ կայանին կից և չորրորդը — կոլխոզ-գիգանտին կից, վորը միացնում է 12 կոմյերիտ-բլիշ, վորոնք գտնվում են յուրաքանչյուր գյուղում — գիգանտի արտադրական մասում:

Մեքենա-տրակտորային կայանների գործողության շրջանից դուրս գտնվող կոլխոզային բլիշների մնացած խումբը սպասարկվում է ամբողջապես շրջկոմի ուժերով:

Կոլխոզներին կից գտնվող կոմյերիտ-բլիշները կոլխոզների նման բաժանվում են փոքրերի և խոշորների: Նախքան պարզելը, թե ինչպես է կառուցվում բլիշը խոշոր կոլխոզում, հարկավոր է բացատրել կոլխոզի արտադրական կառուցումը և յեղնել գլխավորապես դրանից, չե՞ վոր բլիշները մենք վերակազմում ենք արտադրական սկզբունքով:

Յեթե խոշոր կոլխոզը սովորաբար բաժանվում է մի շարք ցեխերի (յերկրագործություն, անասնապահություն, այգե- և բանջարագործություն, վերամշակող և ոժանդակող ձեռնարկություններ), ապա կոմյերիտ-բլիշը ևս իր աշխատանքը հարմարեցնում է այդ ցեխերին:

Բլիշը գլխավորում է բյուրոն: Բյուրոյում, գլխավորապես, մտնում են բլիշի աշխատանքի առանձին բնագավառների կազմակերպիչները (թե ինչպիսի կազմակերպիչներ — այդ մասին կասենք ներքևում), վորոնց միջոցով բլիշի բյուրոն ղեկավարում է ամբողջ կոմյերիտ-աշխատանքը կոլխոզում: Ներբլիշային և մասսայական ամբողջ միութենական աշխատանքը տարվում է ամբողջ կոլխոզի մասշտաբով, իհարկե, խիստ կերպով հաշվի առնելով առանձին ցեխերի պայմանները և առանձնահատկությունները (յերկրագործություն, անասնապահություն և այլն):

Կոլխոզի ներսում ցեխային բլիշները չեն կազմակերպվում, վորովհետև դա ուժերի ջլատում առաջ կբերեր: Բայց յուրաքանչյուր առանձին ցեխում այնտեղ աշխատող կոմյերիտականների թվից 2 հոգի նշանակվում են վորպես «ցեխի համար պատասխանատուներ» — մեկը — արտադրական կազմակերպիչ, մյուսը — քաղցեկ:

Առաջինի անելիքը — կազմակերպել յերիտասարդական հարվածային բրիգադներ և դրանց հետ մշտական աշխատանք տանել, յերիտասարդութեանը ընդգրկել արտադրական խորհրդակցութեան աշխատանքի մեջ, հետևել կոմյերիտականների աշխատանքային կարգապահութեան, պատասխանատու լինել աշխատանքի հաշտութեան և աշխատանքի արտադրողականութեան համար, հետևել աշխատող անասուններին, մեքենաներին, ինվենտարին դրութեան:

Իսկ յերկրորդը հաշվի յե առնում յերիտասարդութեան արամագրութեանը և պահանջներն ու կարիքները, նրա մեջ մտնում է խմբակային և անհատական քաղաքական ազիտացիա, անց է կացնում քաղզրույցներ և ընթերցումներ:

Իտարբերութեան մյուս բոլոր ցեխերից, յերկրագործական ցեխում, վորը յուրաքանչյուր կոլխոզում սովորաբար՝ հողի քանակի և աշխատանքի ժամանակաշրջանի համապատասխան (գարնանացան, բերքահավաք, աշնանացան և աշնանահերկ), բաժանվում է մի քանի բրիգադների, յուրաքանչյուր այդպիսի բրիգադում նշանակվում է (յուրաքանչյուր սեզոնային աշխատանքի ժամանակ) մեկական պատասխանատու կոմյերիտական, վորը իր բրիգադում կազմակերպում է քաղաքական և արտադրական աշխատանքը:

Ստացվում է մոտավորապես այսպիսի մի սխեմա:

Իհարկե, կարող է պատահել, վոր այս կամ այն կոլխոզում լինի միայն յերկու ցեխ, բայց դա չի փոփոխում այդ տեղ նշանակված կոմյերիտ-կազմակերպիչների և քաղզեկների աշխատանքը:

Յերեք-հինգ գյուղ միացնող խոշոր կոլխոզում հարկավոր է ստեղծել կոլեկտիվ ցեխը շիջներով: Փոքր «գաճաճային» բլիջներում կամ այն բլիջներում, վորոնք սպասարկում են մի քանիական «թզուկ» կոլխոզներ, կառուցվացքն ավելի պարզ ու հասարակ է լինելու:

Գործնականում պետք է ամբողջ ուժերը իգործ դնել, վորպեսզի այդ «թզուկ» կոլխոզները միացնել մի կոլխոզում և մի գյուղում, վորովհետև նման կոլխոզնիկները մեծ ոգուտ չեն տալիս վոչ իրենց և վոչ էլ պետութեան: Բացի դրանից, այդ փոքր կոլխոզներում հնարավոր չե տանել վորևե լուրջ արտադրական-տնտեսական և կուլտուրական աշխատանք:

ԲՁԻՋԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Կոլխոզի բլիջի ներսում աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, վորպեսզի բոլոր կոմյերիտները ակտիվ կերպով մասնակցեն բլիջի աշխատանքներին: Դա պետք է կատարել կենդանի, հասկանալի և պարզ ձևով, ինքնաքննադատութեան, ներմիութեանական դեմոկրատիայի, սոցմրցման, իրենց կիմյերիտականների ինքնուրույնութեան և նախաձեռնութեան ամենալայն զարգացման հիման վրա:

Աշխատանքի և ղեկավարութեան հիմնական մեթոդը — նախաձեռնողական խմբակներ, հարվածային բրիգադներ և սիրող-կազմակերպիչներ բլիջային և կոլխոզային աշխատանքի առանձին ճյուղերում:

Բլիջում աշխատանքը և պարտականութեանները բախելու ժամանակ հարկավոր է դեն շարտել «վարիչներին» և «ազիտացրու աշխատողին», «տնտեսական աշխատողին» տիպի համայնապարտակ հին և վիթած

պաշտոններն սխտեմը, փոխարինելով դրանց կազմակերպիչներն ավելի հարմար և կենսական սխտեմով, կազմակերպիչներն, վորոնք պատասխանատու յեն լինելու բջջի աշխատանքի առանձին ճյուղերի համար:

Կազմակերպիչներն շուրջը համախմբվում են համապատասխան նախաձեռնողական խմբեր և հարվածային բրիգադներ, վորոնց մեջ ամբողջապես մտնում են բոլոր կոմյերիտականները կամավոր սկզբունքի և անձնական ընտրութեան հիման վրա:

Ահա բջջային կազմակերպիչներն որինակելի ցանկը. Արտադրական կազմակերպիչ — ղեկավարում է յերիտասարդութեան հարվածային բրիգադները, արտադրութեան մեջ զբաղվում է սոցմրցման հարցերով, կազմակերպում է յերիտասարդութեան մասնակցութեանը արտադրական խորհրդակցութեանը, կազմակերպում է ռացիոնալացման կրուժոկներ և կորիզներ: Նրա շուրջը խմբվում են հարվածային բրիգադների ղեկավարները, արտադրական խորհրդակցութեան յերիտասարդական ակտիվը, և նմանապես կոլխոզի զանազան ցեխերի համար ընտրված կոմյերիտական արտադրական կազմակերպիչները:

Յերիտասարդութեան աշխատանքի կազմակերպիչ — պաշտպանում է յերիտասարդութեան և անչափահասների աշխատանքը, իրավունքները, հետևում է, վոր յերիտասարդութեանը և անչափահասներին ճիշտ ոգտագործեն կոլխոզի աշխատանքներում, և ճիշտ վարձատրեն նրանց աշխատանքը, չի թույլ տալիս, վոր անչափահասներին աշխատեցնեն արգելված, ծանր և վնասակար աշխատանքներում, առանձին ուշադրութեան է դարձնում բատրակ-չքավոր յերիտասար-

դութեան պաշտպանութեան և առաջ քաշման վրա, պատասխանատու յե բրիգադային և անհատական աշակերտութեան գործի ճիշտ կազմակերպման համար:

Կուլտուր-մասսայական և ագիտացիոն աշխատանքի կազմակերպիչ — ղեկավարում է յերիտասարդութեան աշխատանքը ակումբում և խրճիթ-ընթերցարանում, կազմակերպում է մասսայական կամպանիաների և տոների անցկացումը, ղեկավարում է յերիտասարդութեան մեջ տարվող ագիտացիոն և քաղաքական աշխատանքը: Նրա շուրջը համախմբվում են կոլխոզի առանձին ցեխերի համար նշանակված բոլոր քաղղիները, նախաձեռնողները (խաղերի և այլն), ամեն տեսակի կենցաղային խմբակները, որինակ, կեդտի դեմ կովող խմբակը, հարբեցողութեան դեմ կովող խմբակը, խուլիզանութեան դեմ կովող խմբակը և այլն:

Ուսման կազմակերպիչ — կազմակերպում է կոմյերիտականների և յերիտասարդութեան քաղաքական, ընդհանուր-կրթական և ազրոնոմիական ուսումը: Նրա պատասխանատու յե քաղ-դպրոցների, ամեն տեսակի ընդհանուր-կրթական կրուժոկներն և կուրսերի, լիկկայանների, գյուղատնտեսական կրուժոկների համար:

Ռազմական ֆիզկուլտուրային կազմակերպիչ — կազմակերպում է ամբողջ ռազմական, ֆիզկուլտ աշխատանքը, կարմիր նավատորմի և բանակի վրա վերցրած շեֆաշխատանքները և այլն:

Աղջիկների մեջ աշխատող կազմակերպիչ — աղջիկների մեջ տանում է մասսայական աշխատանք, նրանց քաշում է բջջային և հասարակական-կոլխոզային աշ-

խատանքի մեջ, պատրաստում է կոմյերիտմիութեան մեջ մտնելու համար, կազմակերպում է աղջիկների հարվածային բրիգադներ, նրանց ուժերից վոչ վեր, կոլխոգային աշխատանքների համար, պատասխանատու յե աղջիկ բատրակուհիների և չքավորուհիների առաջ քաշման և նրանց ուսման ուղարկելու համար:

Յ ե ռ ե խ ա ն ե ռ ի մ ե ջ ա շ խ ա տ ող կ ա զ մ ա կ ե ռ պ ի չ (պիոներ-կոլվար):

«Թ ե Թ և հ ե ծ ե լ ա զ ո ռ ի» կ ա զ մ ա կ ե ռ պ ի չ — կազմակերպում է «Թեթև հեծելազորի» խմբեր և ղեկավարում է նրանց առորյա աշխատանքը, սերտ կապ է հաստատում բանվորա-գյուղացիական տեսչության որդանների կուսբջջի հետ, կազմակերպում է հետազոտումներ, հարձակումներ (налеты), հավաքում է բողոքներ և այլն:

Յ ե ռ ի տ Թ ղ Թ ա կ ի ց ն ե ռ ի կ ա զ մ ա կ ե ռ պ ի չ և պ ա տ ի Թ ե ռ Թ ի խ մ բ ա գ ի ռ — համախմբում է իր շուրջը յերիտթղթակիցների կրուժոկը, ղեկավարում է խմբելոյի աշխատանքը և պատասխանատու յե պատի Թեթի կանոնավոր լույս տեսնելու համար:

Մ ա մ ու լ ի տ ա ռ ա ծ մ ա ն կ ա զ մ ա կ ե ռ պ ի չ — պատասխանատու յե նրա համար, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտ ստանա Թեթեթեր և կազմակերպում է բաժանորդագրական գործը: Կոլխոգնիկների և անհատականների մասսաների մեջ յեռանդով տաբաժում է Թեթեթեր, ժուրնալներ և գրքեր, գտնում է իր համար ոգնական պիոներ-գլորցիներ, սերտ կապ է հաստատում խճիթ-ընթերցարանի և գրադարանի հետ:

Տ ե խ ն ի կ ա կ ա ն ք ա ռ տ ու ղ ա ռ և փ ո ռ ձ ի հ ա շ վ ա ու — տանում է բջջի բյուրոյի արձանագրու-

թյունները, բջջի անդամների հաշվառումը, ամենայն ուշադրութեամբ հաշվում և գրի յե առնում բջջի աշխատանքի ամբողջ փորձը — և՛ դրականը, և՛ բացասականը փաստերով և թվերով: Այդ նպատակով հաշվառուն յուրաքանչյուր տաս կամ քսան որ բջջային կազմակերպիչներից հավաքում է իրեն համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Հաշվառուն պետք է դառնա «բջջային փորձի շտեմարանը»:

Շ ը ջ կ ո մ ու մ և յ ե ն Թ շ ը ջ կ ո մ ու մ ևս նշանակում են նույնպիսի կազմակերպիչներ (վոչ շտատային ակտիվից) և, բացի դրանից, կադրեր պատրաստելու կազմակերպիչ:

Ն Ա Խ Ա Ձ Ե Ռ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Խ Մ Բ Ե Ր

Բ ջ ջ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ռ պ ի չ ն ե ռ ի շ ու ը ջ հ ա մ ա խ մ բ վ ու մ են նախաձեռնողական խմբերը և հարվածային բրիգադները, վորոնց մեջ մտնում են բոլոր կոմյերիտականներն առանց բացառութեան: Իհարկե, մտնում են այդ խմբերի և բրիգադների մեջ կամավոր սկզբունքի և անձնական ընտրութեան հիման վրա:

Բացի յերիտասարդութեան հարվածային բրիգադներից, կոլխոգային արտադրութեան մեջ կարող են կազմակերպվել ամենազանազան մշտական և ժամանակավոր նախաձեռնողական խմբեր ամեն տեսակի հարցերի լուծման համար: Ուրինակ, գյուղատնտեսական խմբակներ, վորոնք աշխատում են գյուղատնտեսութեան զանազան ճյուղերի յեկամտաբերքատվությունը բարձրացնելու համար, ազրոմիխիմումն անցկացնող, իրականացնող խմբեր, մանկական մուրներ կազմակերպելու խմբեր և այլն:

Առանձնապես կարևոր նշանակութիւն ունի «Թեթև հեծելագործը»: Նրա խնդիրն ե համարձակ և անվախ կերպով կոլխոզի աշխատանքի մեջ յեղած թերութիւնները, խայտառակութիւնները և դասակարգային գծի աղավաղումները անխնայորեն մերկացնել և անմիջապես յենթարկել պատասխանատուութեան «չարիքի կոնկրետ կրողներին», առանց ինկատի ունենալու անձերը և նրանց ունեցած պաշտօնները:

«Թեթև հեծելագործը» պետք ե իր կրակի տակ առնի կոլխոզնիկներին և գյուղացիներին սպասարկող բոլոր հիմնարկութիւնները և կազմակերպութիւնները — հիվանդանոցները, անասնաբուժական կայանները, ագրոկայանները, հացամթերման կայանները, փոխգնութեան կոմիտեները, կոոպերացիան, գյուխորհրդները, խրճիթ-ընթերցարանները և այլն և նկատված բոլոր թերութիւնների մասին անմիջապես հայտնի ԲԳՏ տեղական օրգաններին, կուսբջջին, աշխատելով շուտափուլ կարգով վերացնել թերութիւնները:

«Թեթև հեծելագործի» սուր զենքը — պատի թերթը: Նրա պարտքն ե վոչ միայն մարտականորեն դնել կոլխոզ շինարարութեան հարցերը, այլ և դրանց շուրջը կազմակերպել բատրակ-չքավոր և միջակ մասսաները: Պատի թերթը, իր սուր լեզվով կծելով բոլոր ծուլերին, թամբալներին, թափթփվածներին, բյուրոկրատներին և պողկուլաչնիկներին, պետք ե նրանց գլխին թափի մասսաների կատաղութիւնը: Պատի թերթը և նրա խմբկոլը ևս հանդիսանում են հարվածային խմբերից մեկը և մեծ նշանակութիւն ունեն: Շատ ընկերներ կարող են վախենալ աշխա-

տանքի և պարտականութիւնների այսպիսի բազմազանութիւնից և հարցնել.

— Այդ բոլորի համար վճարտեղից մարդ ճարել:

Ամենից առաջ բոլորովին պարտադիր չե հետևել այդ սխեմային և բջջի աշխատանքները կազմակերպել «իսկ և իսկ» այդ սխեմայի տառի համաձայն: Ընդհակառակը, այդ սխեման պետք ե լինի ճկուն և փոփոխվի նայած բջջի մեծութեան, տեղական պայմաններին, կոլխոզի արտադրական առանձնահատկութիւններին և հարմարվի կոմյերիտիութեան առաջ ծագող տնտեսական և քաղաքական նոր խնդիրներին:

Չպետք ե նաև մոռանալ, վոր կոլխոզի կոմյերիտբջջի խնդիրը հանդիսանում ե վոչ միայն հոգալ իր անդամների մասին, այլ և բատրակ-չքավոր և մեզ մոտիկ միջակ յերիտասարդութեան լայն շերտերը գրավել նախաձեռնողական խմբերի և հարվածային բրիգադների մեջ և նրանց ևս դարձնել ակտիվ շինարարներ:

Միջին և ներքին վոլգայի մի շարք կոմյերիտկազմակերպութիւններ արդեն սկսել են բջջիների վերակառուցումը նոր հիմունքներով, արտադրական սկզբունքներով և նրանց վերակազմման առաջին քայլն այն ե յեղել, վոր նրանք անցած կոլխոզային գարնանն սկսել են կազմակերպել մասսայական հարվածային բրիգադներ գարնանացանի և կոլեկտիվացման վճռական բնագավառներում, մասերում:

Ահա Սամարի օկրուգի Յեկատերինսկի շրջանի Ստուդենցկո բջջի օրինակը:

Բջջիը հայտարարում ե իրեն հարվածային, մոբիլիզացված՝ ցանքային կամպանիայի ամբողջ ժամա-

նահամիր շոցում, ամբողջ կազմով մտնում է գարնանացանին նախապատրաստվելու համար իր ստեղծած բրիգադների մեջ:

Բջիջը կազմակերպում է 14 հարվածային բրիգադ, վորոնց մեջ, բացի 36 կոմյերիտականից, մտնում են 114 վոչ կոմյերիտականներ, վորոնց թվում մեծահասակ պիոներների մի մասը:

Ամեն մի բրիգադում մտնում է մեկական կոմյերիտականից վոչ պակաս: Այդ կոմյերիտականները դառնում են բրիգադների ղեկավարներ:

Վազմակերպում են այսպիսի բրիգադներ — ուտիլիտումոլյթ հավաքելու, տրակտորներ գնելու նախավրճարներ հավաքելու, սերմնային ֆոնդի, սերմերի գտման և ախտահանման, յեղած գյուղատնտեսական ինվենտարը և մեքենաները հաշվի առնելու և ստուգելու նրանց պատրաստ լինելը ցանքսի համար, կերի հաշվառման, գյուղատնտեսական ինվենտարի նորոգման, ցանիչների կարգավորման, անասունների վրա շեֆոթյուն վերցնելու, գյուղատնտեսական նոր արտելի կանոնադրությունը բացատրելու, գրքեր, ցանքսային գրականություն և թերթեր տարածելու և այլն բրիգադներ:

Յուրաքանչյուր բրիգադ բջիջի բյուրոյից և կոլխոզի վարչությունից ստանում է կոնկրետ առաջադրություններ. բրիգադի պետը ամեն ոք բջիջի քարտուղարին գեկուցում է այդ առաջադրություն իրականացման ընթացքի մասին:

Բրիգադներն իզուր չեն աշխատում: Մի ամսվա ընթացքում նրանք ծախեցին 67 ուղբու ուտիլիտումոլյթ և հավաքեցին ևս կես տոննա. աշխատելով որ

ու գիշեր, յերկու տրիյերներով տեսակավորեցին 9700 ցենտներ սերմ, յերեք ուրվա ընթացքում ախտահանեցին 103 ցենտներ սերմ, հավաքեցին մոտ 35 հազար ուղբու նախավճար տրակտորներ գնելու համար, տարածեցին 20 ուղբու ցանքսային գրականություն, յերկու ուրվա ընթացքում կազմ և պատրաստ դրության բերին 26 շարքային ցանիչ, մի ուրվա մեջ հաշվի առան — 2228 տոննա կոշտ կեր, 320 տոննա խոտ, 75 տոննա հարդ, համակենտրոնացված կեր — 45 տոննա և այլն:

Անցկացրին գյուղատնտեսական ինվենտարի հաշվառում և հայտնաբերեցին՝ կանոնավոր ցանիչներ — 113 հատ, անկանոն — 10 հատ, ցաքան — 698, հնձիչ — 187 և ձիասարքի 823 կոմպլեկտ (խամուտներ, սանձեր, թամբեր և այլն):

Այդ բոլորի հետևանքով Ստուգենցի կոլխոզները գարնանացանին պատրաստվում են ճիշտ ժամանակին և 100%-ով.

Ապրիլի 5-ին անց են կացնում կոլխոզների՝ դաշտային աշխատանքներին անցնելու պատրաստականություն ստուգատես: Ստուգատեսին իրենց ամբողջ ինվենտարով գալիս են և անհատականները:

Դարնանացանը Ստուգենցի կոլխոզներում անցնում է կազմակերպված և միահամուռ կերպով:

Դաշտային ամառային աշխատանքների ժամանակ բջիջը իր աշխատանքները տեղափոխում է դաշտ, վորտեղ կոլխոզիկների հանգստի և գիշերելու տեղ գնում են հատուկ ագիտատորներ, գրույց կազմակերպողներ և գրբաշխներ:

Հարվածային բրիգադների և նախաձեռնողական խմբերի աշխատանքը միայն այն ժամանակ հաջող կլինի, յեթե հարվածայինները և նախաձեռնողական խմբի անդամները պարզ կերպով հասկանան իրենց խնդիրները, յեթե բլլի բյուրոն կամ բլլային կազմակերպիչները կանոնավոր կերպով, սահմանված ժամկետերին ստուգեն հարվածային բրիգադների և նախաձեռնողական խմբերի աշխատանքը, լսեն նրանց զեկուցումները, հանձնարարեն նոր առաջադրություններ, տան գործնական ցուցմունքներ այն մասին, թե ինչպես հենց աշխատանքի ընթացքում պետք է վերացնել թերությունները, աշխատել ձեռք բերել ավելի խոշոր նվաճումներ, ստիպեն ծուլերին, յետմնացողներին՝ ուժ տալ, հասնել և յուրաքանչյուր կոմյերիտի համար սահմանեն յերկաթյա, հեղափոխական պատասխանատվություն բլլի կամ բրիգադի կողմից իրեն հանձնարարված աշխատանքի համար:

Բլլի ամբողջ աշխատանքը պետք է տարվի խիստ մշակված, ընդհանուր ժողովում բազմակողմանի քննարկման յենթարկված պլանով, վորտեղ պետք է ցույց տալ, թե ինչ պիտի անել, յերբ պիտի անել և ո՞վ պիտի անի: Առանձին բրիգադների և նախաձեռնողական խմբերի աշխատանքը ևս իր հերթին պետք է յելնի բլլի ընդհանուր պլանից և այն նոր ու մարտական խնդիրներից, վորոնք ծագում են տլյալ բրիգադի կամ խմբի աշխատանքի բնագավառում:

Այդ պայմանների պահպանման դեպքում բլլիչների քարտուղարները ստիպված չեն լինի ասելու, վոր բլլիչում կարգապահությունը թույլ է, վոր վոչ

վոր վոչինչ չի ուզում անել, վոր յերիտասարդները և կոմյերիտականները անգործ թափառում են:

Վերակազմվելու հաջողության հիմնական պայմանը — ամենալայն բացատրական աշխատանք կոմյերիտական և կուսակցական մասսաների մեջ, բլլային և շրջանային ակտիվի անհապաղ, թեկուզ կարճատև պատրաստում և քաղաքային ու շրջանային կոմյերիտ ակտիվից լավ հրահանգված բրիգադների յերկարատև առաքում գյուղ: Միայն թե՛ թղթե շրջաբերականները վերակազմման մասին այստեղ անգոր են լինելու:

Հարկավոր է կենդանի, հաստատուն խոսք, հարկավոր է գործնական, ցուցադրական աշխատանք:

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմյերիտիության շատ գյուղ-բլլիչների գլխավոր թերությունն այն է, վոր նրանք մինչև հիմա յել դեռ լիովին չեն շրջվել դեպի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մարտական խնդիրները, վոր նրանք մինչև հիմա յել կոլխոզ-շինարարությունը չեն դարձրել իրենց աշխատանքի կենտրոնը և չեն հանդիսանում բատրակ-չքավոր ու միջակ յերիտասարդության լայն մասսաների իսկական կազմակերպիչները, դեկավարները կոլեկտիվացման գործում, գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում:

Ահա ձեզ որինակներ:

Ներքին Վոլգայի շատ շրջաններում ՀամլկՅեՄ կենտկոմի կազմակերպած հետազոտությունը պարզեց, վոր

«ԲՆԻՇՆԵՐԻ մեծամասնութիւնը չգիտե և չի վորոշել իր տեղը կոլխոզում: Բալաշևսկու շրջանի Սվյատոսլավկա գյուղում առանց կոմյերիտ-բՆԻ մասնակցութեան կազմակերպվել է խոշոր կոմունա. այժմ կոմունարները ապրում են մի մտքով — ինչպես բարելավել կոմունայի տնտեսութիւնը, իսկ բՆԻՇը բոլորովին չի զբաղվում տնտեսական հարցերով: Ալեքսեյեւսկու շրջանում կազմակերպված է հինգ խոշոր կոմունա, իսկ կոմյերիտ-շրջկոմը և բՆԻՇները բառիս բուն իմաստով վոչ մի աշխատանք չեն տարել, վորպեսզի կանոնավորեն կոմունայի ներքին կյանքը»:

Բուզուլսկու շրջանի Յելշանկա գյուղում կոլխոզնիկների և մենատնտեսավարների միացյալ ժողովում ցանքսի պլանը քննարկելու ժամանակ քվեարկելիս, պլանը չի ընդունվում: Կոմյերիտականները լուռ ու մունջ նստել են մի կողմը, իսկ անկուսակցական յերիտասարդութիւնը ակտիվ կերպով գոռացել է. «Յանելու յենք անհատորեն, պլանով չենք ուզում»:

Սակայն դա դեռ ծաղիկներն են: Ահա ձեզ պտուղները:

Որենբուրգի ոկրուգի Սորոչինսկու շրջանում գյուղատնտեսական արտելի կոմյերիտ-նախագահը արտելը վերածում է կոմունայի, բայց յերբ տեսնում է, վոր կոմունայում գործերը չեն գնում, վախենում և փախչում է: Իլեկուի տնտեսապետ ուժեղ կոմյերիտական գյուղատնտեսական արտել «Աշխատավոր կոմյերիտականը» միանում է նույն տեղի չքավոր-միջակ կոլխոզի հետ, սակայն մի քանի ժամանակից հետո տեսնելով այդ կոլխոզի անկազմակերպվածութիւնը և տնտեսական թուլութիւնը, հրաժարվում է նրանից,

ասելով. «Սկզբում աշխատեք մենակ, իսկ մենք նայենք և տեսնենք, թե ինչ դուրս կգա ձեր արածից»: Մի խոսքով մարդիկ «ոգնում են»:

Սամարի ոկրուգի Ոգերյում կոմյերիտականները բացահայտ կերպով ոգնել են կուլակին — շրջել են տները և գյուղացիներին ասել «Մեզ բռնի ուժով քշել են կոլխոզ, հիմա պետք է դուրս գալ»:

1930 թվի գարնանացանի կամպանիայի ժամանակ Սամարի ոկրուգի Յեկատերինսկու շրջանի Սպասսկու 50 — 60 բՆԻՇից միայն մի քանի բՆԻՇներ են կարողացել արտամիութենական յերիտասարդութեան կազմակերպել և տանել իրենց յետևից: Յերկու խոշորագույն շրջկոմ — Բուզուլուսկու և Կինելսկու — ամբողջապես ցրման են յենթարկվում, վորովհետև չեն մասնակցել ցանքսային կամպանիային և անընդունակ են գտնվել կազմակերպել մասսաները:

Կոմյերիտմիութեան մի շարք գյուղական կազմակերպութիւններ չեն կարողացել արագ և ռազմական կարգով վերակառուցվել և համախմբվել Համ. ԿԿ(բ) Կենտկոմի մարտի 2-ի վորոշման շուրջը, չեն կարողացել գլխավորել ընկ. Ստալինի հողվածի և Կենտկոմի վորոշումների ելութիւնը բացատրելու աշխատանքները: Դեռ ավելին, նրանք շփոթվել են, անընդունակ են յեղել արագ կերպով կողմնորոշվել և կոմյերիտականներին մոբիլիզացնել կուլակութեան կատարի հակազրոհները յետ մղելու համար: Համ. ԼԿՅԵՄ Որենբուրգի Ոկրուժկոմը միայն ապրիլի 5-ին է (ընկ. Ստալինի հողվածների լույս տեսնելուց մի ամսից ել ավելի հետո) բՆԻՇներին հրահանգում, վորպեսզի վերջիններս սկսեն ուսումնասիրել ընկ. Ստա-

լինի հողվածը և կենտկոմի վորոշումները, այսինքն այն ժամանակ, յերբ արդեն կուլակն այդ գործում «աշխատել եր»:

Առանձին բջիջներ այնքան են իրենց գլուխը կորցնում, վոր առանց ճակատամարտի մասսայական դիրքերը հանձնում են կուլակին, չդիմադրելով կուլակային ագիտացիային և չկարողանալով կանխել կոմյերիտների դուրս գալը կոլխոզից:

Միայն Որենբուրգի ոկրուգում կոլխոզներից դուրս են գալիս 200 կոմյերիտական:

Ինչ պատճառով է այդ բոլորը կատարվում: Վորովհետև կոմյերիտների աշխատանքի և ղեկավարության ներկա կառուցվածքը գյուղում հնացել և յետ է մնացել: Վորովհետև գյուղի կոմյերիտականների խոշոր մասը քաղաքականապես անգրագետ է և բավարար չափով պարզ պատկերացում չունի կուսակցության գլխավոր գծի և գյուղի նկատմամբ ունեցած քաղաքականության մասին: Իսկ դա բացատրվում է նրանով, վոր գյուղում տարած մեր քաղլուս աշխատանքի վորակը շատ ցածր և վատ է: Վորովհետև մեր գյուղական բջջային և շրջանային ակտիվը մեծ մասամբ անպատրաստ է ինչպես գործնականապես, այնպես էլ տեսականապես: Նրանցից շատերը կարող են վոչ վատ ագիտացիա տանել և «աչքերին թող փչել», բայց շատ քչերն են կարողանում մասսաներին կազմակերպել կենդանի և կոնկրետ գործերի շուրջ: Վորովհետև գյուղբջիջներում մասսայական աշխատանքը արտամիութենական յերիտասարդության և մասնավորապես բատրակ-չքավոր յերիտասարդության մեջ շատ թույլ է, բացահայտ կերպով

թերագնահատվում է և շատ հաճախ... բոլորովին բացակայում է:

Իսկ ինչպես վերացնել այդ եյական թերությունները: Կոմյերիտների գյուղական (կոլխոզային) բջիջները ինչպես կարող կլինեն բարձրացնել և ամրացնել իրենց մարտունակությունը:

Իրա համար ամենից առաջ հարկավոր է.

Անմիջապես և լիովին շուտ գալ դեպի գլխավոր խնդիրը — գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, բջիջների աշխատանքն ամբողջապես յենթարկել կոլխոզային շինարարության և կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու խնդիրներին:

Պետք է աշխատել այնպես անել, վորպեսզի բջիջը միշտ էլ հանդես գա վորպես համախմբված և կազմակերպված կոլեկտիվ, ակտիվ մասնակցի կոլխոզի շինարարության և աշխատանքին, նախորդ իր ժողովներում քննության առնելով կոլխոզի աշխատանքի և շինարարության հարցերը:

Առանց ժամանակ կորցնելու, յուրաքանչյուր բջիջում մարտական կարգով վերակառուցել քաղուսմունքը, վճռականորեն ջարդելով այդ գործի հսկայական կարևորությունը թերագնահատող տրամադրությունները: Այժմ չգբաղվել քաղուսմամբ, նշանակում է ճակատամարտի դուրս գալ առանց զենքի, չիմանալով հանուն ինչի յես պայքարում:

Ինչ սովորել:

Առաջին հերթին լավ ուսումնասիրել կուսակցության քաղաքականությունը գյուղում, կապակցված համատարած կոլեկտիվացման և կուլակության վորպես դաս-

սակարգի վերացման հետ, յուրացնել կոլխոգային շարժման իմաստը և ամենաեյական խնդիրները, «չբի պես» գիտենալ և կարողանալ կոլխոգնիկներին և գյուղացիներին բացատրել գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը, նոր գյուղատնտեսարկը և կուսակցության վերջին վորոշումները կոլխոգչինարարության մեջ յեղած աղավաղումների դեմ պայքարելու և կոլխոգնիկներին արտոնություններ տալու մասին:

Յուրաքանչյուր բլլում պետք է գոյություն ունենա շարունակ աշխատող քաղաքացի կոմյերիտականները և արտամիութենական յերիտասարդության համար: Յուրաքանչյուր լիկկայան պետք է դարձնել քաղանդրագիտության վերացման կայան: Քաղաքացիները դեկավարելու համար ընտրել ամենաուժեղ ակտիվիստներին:

Յեթե դասագրքեր չկան, ապա պետք է ոգտագործել վերջերս այնքան մեծ քանակությամբ լույս տեսած բրոշյուրները և թերթերը:

Ի՞նչպես սովորել:

Անպայման և պարտադիր կերպով տեսությունը միացնել գործնականի հետ: Պետք է սովորել այնպես, վորպեսզի ուսման յուրաքանչյուր քայլը անխզելիորեն կապվի սոցիալիզմի կառուցմանը և դասակարգային թշնամու դեմ մղած պայքարին ակտիվ կերպով մասնակցելու հետ:

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է սովորի քաղաքագիտություն նրա համար, վորպեսզի գիտակցաբար և ակտիվ կերպով կենսագործի կուսակցության գլխավոր գիծը, վորպեսզի քաղաքականապես ըմբռնի և հասկանա իր առորյա գործնական աշխատանքը, վոր-

պեսզի խորը և պարզ կերպով գիտակցի կուսակցության և կոմյերիտության անցկացրած միջոցառումների քաղաքական իմաստը:

Բլլի քաղուսման վորակը պետք է գնահատել նրանով, թե նա ինչպես է պայքարում հանուն կուսակցության գլխավոր գծի, թե կոմյերիտականները ինչպես են մասնակցում կոլխոգչինարարությանը և ինչպես են պայքարում նրա (կոլխոգի) թշնամիների դեմ:

ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԻՄՍՍԵՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՁ ՉԻՏԱԾ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կոմյերիտության կոլխոգային բլլիները մասսայական աշխատանքի հիմնական խնդիրն է այժմ — գլխավորել և կազմակերպել բատրակ-չքավոր և միջակ յերիտասարդության միլիոնավոր մասսաների ուժեղ կերպով աճող ակտիվությունը, հատորեն հաշվի առնել նրա առողջ պահանջները և շահերը, ուղղել նրան դեպի գյուղի սոցիալիստական վերակառուցման հունը:

Յեթե մենք չկարողանանք այդ անել, ապա յերիտասարդության ակտիվությունը ոգտագործելու յեն մեր դասակարգային թշնամիները և նրան (յերիտասարդության) կանգնեցնելու յեն մեր դեմ, սոցիալիզմի կառուցման դեմ:

Սամոյլովսկու համատարած կոլեկտիվացման շրջանում (Ներքին Վոլգա) այնտեղ, ուր կոմյերիտ-բլլիները չեն կարողացել և չեն աշխատել գլխավորել բատրակ-չքավոր և միջակ յերիտասարդության աճող ակտիվությունը, այդ ակտիվությունը ոգտագործել են մեր թշնամի-

ները, վորոնք հասել են նրան, վոր կոմյերիտմիութեան շրջանային կազմակերպութեան 900 անդամի դիմաց ունեն քրիստյերիտմիութեան նույնքան անդամներ, վորոնց մեջ կա վոչ միայն միջակները, այլև չքավորները և նույնիսկ բատրակները զգալի մաս:

Կոմյերիտական շատ բջիջներ կտրված են յերիտասարդութեան մասսաներից, փակվել են ներբջջային կեդեի մեջ և տապակվում են իրենց սեփական յուզով:

Այդպիսի «վախենալը մասսաներից» կործանիչ, քաղաքականապես մահացու հիվանդութիւնն է և զրա դեմ պետք է պայքարել ամենավճռական կերպով:

Կոլխոզային բատրակ-չքավոր և միջակ յերիտասարդութեան միլիոնավոր մասսաները իրենցից վիթխարի ուժ են ներկայացնում, և ինչ էլ վոր լինի կոմյերիտմիութեանը, պետք է այդ ուժին տիրանա, և այն յենթարկի իր ազդեցութեան:

Իսկ ինչպես պետք է աշխատել արտամիութենական յերիտասարդութեան հետ:

Առաջին, ծավալել կուլտուր-մասսայական աշխատանքն իր բոլոր ձևերով (հանգստի և զվարճութեան — յերեկույթների, ներկայացումների, մրցումների և այլն կազմակերպումը, ռազմա-ֆիզկուլտային աշխատանքը, ձեռագործի կրուժոկներ և այլն) և, լցնելով այդ աշխատանքի բոլոր մոմենտները քաղաքական բովանդակութեամբ, այն դարձնել հզոր զենք յերիտասարդութեանը սոցիալիզմի կառուցման վոգով, դասակարգային թշնամիների դեմ անխնա պայքարելու վոգով մարտական դաստիարակութիւնն տալու համար:

Յերկրորդ, բատրակ-չքավոր և միջակ յերիտասարդութեան կանոնավոր կերպով պատրաստել այնպես,

վոր նա ևս տնտեսական-քաղաքական բոլոր կամպանիաներում ակտիվ և կազմակերպված կերպով դուրս գա կոմյերիտմիութեան հետ միասին, զրա համար կազմակերպելով հատուկ զրույցներ, ժողովներ և արտամիութենական յերիտասարդութեան կոնֆերենցիաներ:

Յերրորդ, յերիտասարդութեանը գրավել կոմյերիտական ժողովներում և ակտիվ մասնակից անել ժողովի որակարգի հարցերի քննարկման, կարողանալ տղաներին և աղջիկներին խոսքով, աֆիշներով և հատուկ տոմսերով հրավիրել ժողովներին:

Չորրորդ, արտամիութենական յերիտասարդութեանը յեռանդագին գրավել բջջի կազմակերպված բոլոր դպրոցներում, կրուժոկներում, հարվածային բրիգադներում և նախաձեռնողական խմբերում:

Ձանազան գործիքների վրա նվագելը, յերգը, խաղերը, ազիտյուլյոնները և զրույցը հարմար մոմենտներին, պետք է դառնան կոմյերիտմիութեան մասսայական աշխատանքի զենքը:

«Կարմիր Արշալույս» կոլխոզում (Հյուսիսային Կովկաս) աշխատանքից ազատ ժամանակ կոմյերիտականները վարմոշկա նվագելով հավաքում են յերկրագործ-կոլխոզնիկներին և ընդմիջումներին նրանց հետ անց են կացնում զրույցներ կոլխոզային շինարարութեան մասին:

ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուլակութեան դիմադրութիւնը հաջող հաղթահարելու և նրան վորպես դասակարգ վերջնապես վերացնելու, վոչնչացնելու գլխավոր միջոցը — դա կոլխոզների արտադրական ուժի ամեն կերպ ուժեղաց-

նուժն է՝ բատրակութեանը և չքավորութեանը գլխավոր գծի շուրջ համախմբելու հիման վրա և բատրակութեան ու չքավորութեան դաշինքը միջակի հետ ընդդեմ կուլակի:

Կոլեկտիվացման ձեռք բերած հաջողությունների ամրապնդման և մեր հետագա առաջարժման համար անհրաժեշտ է ամուր կերպով հենվել չքավորութեան և բատրակութեան վրա, վորոնք ընդունակ են ամենաքիչ տատանումներով գնալ կոլխոզային շարժման առաջին շարքերում: «Բատրակութունը և չքավորութունը վոչինչ չի կորցնի, բացի աղքատությունից: Յե՛վ այդ բանը նրանցից ստեղծում է գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ուղու ամենից ավելի հաստատուն կողմնակիցները»:^{*}

Կուսակցության և կոմյերիտմիության մարտական խնդիրը — «Համախմբել կոլխոզների բատրակ-չքավորային կորիզը, հատկապես հասարակ տիպի կոլխոզներում և համատարած կոլեկտիվացման շրջաններում, առանց վորի անհնար է վերջ տալ կուլակներին և այլ թշնամի տարրերի վորոնումներին, վորոնք ձգտում են «կոլխոզները քայքայել և պայթեցնել ներսից (ընդգծումը իմն է — Վ. Կ.):»

Կոլխոզի ներսում համախմբելով բատրակութունը և չքավորութունը, հարկավոր է աշխատանքը տանել այնպես, վորպեսզի վոչ մի դեպքում թույլ չտալ միջակի յետ մղումը ղեկավարությունից, «վորպեսզի

* Համ. ԿԿ (բ) ԿԿ 1929 թվի նոյեմբերյան պլենումը:

կոլխոզի ներսում հող չլինի այսպիսի տրամադրությունների համար, վոր, ահա, տեսնում եք, կոլխոզներում ևս գոյություն ունի նույն դասակարգային պայքարը, ինչ վոր և կոլխոզից դուրս» (Կագանովիչ):

Կոլխոզների ամենահասարակ տեսակներում կազմակերպվում են բատրակ-չքավորական խմբեր: Այնտեղ, ուր չկան կուսբջիջներ, կոմյերիտ-բջիջները պարտավոր են իրենց վրա վերցնել այդ խմբերի ղեկավարությունը և պատասխանատվությունը նրանց աշխատանքի համար, ուղարկելով այնտեղ ամենալավ, ամենահեղինակավոր և ստուգված ակտիվ ընկերներին:

Հարկավոր է աշխատել, վոր ամենակարճ ժամանակամիջոցում կոմյերիտ-ղեկավարության բոլոր վճռական կետերը, սկսած բջից մինչև շրջկոմ, կենտրոնացվեն բատրակ-չքավորական կորիզի ձեռքը, վոր բատրակութունը և չքավորութունը առաջին հերթին ապահովվեն ամեն տեսակի ուսմամբ և կուլտուրական սպասարկումով:

Համ. Կոմ. Կուսակցության (բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումը մատնանշեց, վոր «չքավորութեան և բատրակութեան մեջ աշխատելու թերագնահատությունը և պասիվությունն այդ աշխատանքում հանդիսանում է պրակտիկայում յեղած աջ թեքման ամենավտանգավոր արտահայտություններից մեկը, վորը առանձնապես վտանգավոր է ներկայումս և իրենից ներկայացնում է մանրբուրժուական տարրերի և կուլակային գաղափարախոսության՝ մեր կուսակցության և կոմյերիտմիության վորոշ շերտերի վրա գործած ճնշման արտացոլումը»:

Իր վերջին վորոշումով Կենտկոմը ընդգծեց, Վոր աշխատանքը չքավորության և բատրակության հետ, կուսակցության այդ կարևորագույն աշխատանքը գյուղում, «կարող են արհամարել միայն այն ելեմենտները, վորոնք անհարազատ և թշնամի յեն Համ. Կ. Կուսակցության(բ) և Համ. ԼԿՅԵՄիության»:

Միևնույն ժամանակ մեր գյուղական բլիշների մեծամասնության մեջ մենք ունենք այնպիսի դրություն, յերբ բացահայտ կերպով և յերբեմն հանցագործորեն թերագնահատվում է բատրակային կորիզի և նրա հետ աշխատելու հսկայական նշանակությունը, յերբ տիրում է փակատար շփոթություն և մոլորվածություն այն հարցի առթիվ, թե ի՞նչպես և ո՞ւր առաջ քաշել չքավոր յերիտասարդությունը և ի՞նչ կերպ ամրացնել նրան: Սամարի ոկրուզի իմ այցելած յերեք շրջանների վոչ մի բլշում բատրակ-չքավորական յերիտասարդության հետ աշխատանք չի տարվում:

Սպասակու շրջանի Պոտուլովկայի բլիշն ասում է. «Այժմ մենք ժամանակ չունենք զբաղվելու արտամիութենական յերիտասարդության մեջ աշխատանք տանելով: Այ, յերբ կառուցենք կոլխոզ, այն ժամանակ կզբաղվենք և յերիտասարդությամբ»: «Գործի այսպիսի դրման» հետևանքով կոլխոզը քայքայվում է:

Չապայեվի շրջանի Անդրոսովսկու միայցայ կոլեկտիվի քարտուղար Կալաչյովը հայտարարում է. «Քաղաքականապես անզրագետ բատրակներին առայժմ չընդունենք կոմյերիտմիության մեջ, թող նախ և առաջ պատրաստվեն»:

Չապայեվսկու Ստրոյուչ բլշում կոմյերիտմիությունից հեռացնում են հարվածային բրիգադ կազմա-

կերպող մի բատրակի միմիայն նրա համար, վոր նա վոող չունենալու պատճառով մի քանի ամիս անդամավճար չի մուծել:

Հարկավոր է անհապաղ և ուժեղ կերպով հարվածել այն բոլորին, ով ճգնում է սըողել բատրակ-չքավորական կորիզը համախմբելու աշխատանքը, և նրանց դեմ մղել վճռական պայքար, կանգ չառնելով աշխատանքից և միությունից հեռացնելու առաջ:

Կան մարդիկ, վորոնք դատում են այսպես. «Ջանի վոր կազմակերպված է կոլխոզ և նրա մեջ քաշված են վող չքավորությունը և բատրակությունը, նշանակում է չքավորության ոգնելու հարցը և նրա շահերի մասին հոգալը վերանում են մեջտեղից»: Դա մի հսկայական սխալ է: Ամրապնդելով դաշինքը միջակի հետ, անհրաժեշտ է ամեն կերպ ոգնել բատրակության և չքավորության, մեծագույն զգայնությունամբ և ուշադրությամբ վերաբերվելով նրանց կարիքներին և «մանր պահանջներին»:

ԿԵՆՏՐԱՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԵՖԵՐԸ

Կենդանաբուժության զարգացումը մեր յերկրում ունի հսկայական նշանակություն:

Բոլորին հայտնի յե կաթնամթերքների, մսի, կաշու սուր պահասը, վոր զգում է մեր յերկիրը:

Միևնույն ժամանակ մեզ մոտ կենդանաբուժությունը գտնվում է վերին աստիճանի ցածր մակարդակի վրա:

Ահա ձեզ որինակ. մեր անատունների մսի և կաշու քաշը 2¹/₂ անգամ քիչ է ամերիկյան և արևմտյան վրոպական անասունների քաշից: Ամենակոպիտ

հաշիվների համաձայն, կենդանաբուժության վատ դրման պատճառով մենք տարեկան կորցնում ենք 17 միլիոն ցենտներ միս (10625 հազար փուխ) և մոտավորապես 2 միլիոն ցենտներ կաշի (1250 հազար փուխ), վորոնց արժեքը մի միլիարդ ութըսուց ավել է:

Դա դեռ քիչ է. վերջերս, մասսայական կոլեկտիվացման կապակցությամբ և շնորհիվ կուլակային պրովակացիայի, դրդման, — «վոր կոլխոզում վոչինչ հարկավոր չե, ամեն ինչ տալու յեն», — յերկրում տարածվեց կենդանիներին գիշատիչորեն, գազանաբար վոչնչացնելու ալիքը, վորը շատ ուժեղ կերպով պակասեցրեց խոշոր և մանր անասունների քանակը: Մի շարք շրջաններում վոչնչացված է կովերի, վոչխարների և խոզերի մոտ 50%-ը:

Այսպիսի դրուժյունը այլևս անթուլատրելի յե: Այդ պատճառով ել կենդանաբուժության ամեն կերպ զարգացնելը և խրախուսելը հանդիսանում է ինչպես կոլխոզների, այնպես ել անհատական տնտեսությունների մարտական խնդիրը:

Կոլխոզների ե այլ գյուղատնտեսական ընկերությունների կոմյերխտականները և յերիտասարդությունը պետք է շեֆություն վերցնեն կենդանաբուժության վրա և նպաստեն նրա զարգացման ինչպես կոլխոզներում, այնպես ել գյուղատնտեսական այլ ընկերություններում և անհատական տնտեսություններում:

Կոմյերխտության գործնական խնդիրները կենդանաբուժական ֆրոնտում հանդիսանում են.

Պայքար ընդդեմ անասունների մորթելու, առ ու ծախի և գազանաբար վոչնչացնելու, առանձին ուշա-

դրություն դարձնելով ջահելների (հորթերի, գառների, խոզի ձագերի, ջուռակների) պահպանման վրա, դրա համար վորպես միջոց ոգտագործելով կոնտրակտացիան, բեղմնավորման կամպանիայի անցկացնելն և փոքրաթիվ ազնվացեղ արտադրողների (բազանների և այլն) խելացի ոգտագործման նպաստելը, ազնվացեղերի կենտրոններ (բույներ), մասսիվներ ստեղծելը, լավ տեսակների ընտրությունը, պայքար անասունների համաճարակ հիվանդությունների դեմ, ջրելու տեղերի (ջրհորներ, լճակներ) կազմակերպումը և պահպանումը կեղտոտվելուց, ճահիճ-լճակների, գետակների, առուների և այլն մաքրումը:

Կոլխոզներում կաթնատու կենդանիների հանրային նախիրներ ստեղծելը: Կաթնային մթերքների կոլեկտիվ վերամշակելու և ծախելու կազմակերպումը, պայքար կաթնատվության բարձրացման համար և ընդդեմ գիշատիչ մասմթերումների հիմնական կաթնային շրջաններում:

Կենդանաբուժական հասարակ ընկերությունների, կաթնային արտելների, խոզաբուժյան կոլխոզների ստեղծումը, որինակելի գոմերի, ախոռների, հավաքների կազմակերպումը և այլն:

Կոմյերխտ-բլիջները պետք է ակտիվ կերպով մասնակցեն վերամշակող ձեռնարկների՝ ֆերմաների, յուղահան գործարանների, պանրագործարանների, սպանդանոցների, պահածոների և աղիքների գործարանների, կաշեգործարանների և այլն կառուցմանը:

Անհետաձգելի մի խնդիր ել հանդիսանում է ինչպես հասարակական, այնպես ել անհատական գոմերի և ախոռ-

ների տաքացնելը. միայն այդ միջոցառումը բարձրացնում է անասնի յեկամտաբերությունը 10—25%-ով:

Հյուսիսային յերկրի, Յակուտիայի և Հեռավոր Արևելքի կոմյերիտ-կազմակերպությունները առանձին ուշադրություն պետք է դանձնեն յեղնիկաբուծության (այժեղջրների) զարգացմանը ակտիվ կերպով մասնակցելու անհրաժեշտության վրա:

Սոչոր նշանակություն են ստանում ճագարաբուծությունը, թռչնաբուծությունը, դրանցով պետք է շատ ուշադիր զբաղվեն պիոներական կոլեկտիվները և դպրոցները: Յեկող տարի մենք պետք է տանք մի միլիոն ճագարի մորթի, վորի հատը արտասահմանում գնանատվում է մեկից մինչև չորս դոլար: Յուրաքանչյուր եզ ճագար տարեկան տալիս է 10 և տասից ավելի կիլոգրամ միս:

Մենք արդեն հիմա ունենք կոմյերիտական խոշոր կենդանբուծական սովխոզների ստեղծման դրական փորձ: Հարկավոր է, վոր կենդանբուծական և յերկրագործական, (այսինքն հացառատ) շրջանների, տեղերի կոմյերիտ-կազմակերպությունները ամենամոտիկ ժամանակամիջոցում ստեղծեն վոչ պակաս, քան մեկական այդպիսի սովխոզ:

Այսպես, որինակ, Սամարի ոկրուզում կոմյերիտական ոկրուզային կազմակերպության ուժերով ստեղծված է կոմյերիտական կենդանբուծական խոշոր սովխոզ «Յերիտասարդ գվարդիա», վորն այժմ ունի 12 հազար գլուխ կաթնային ապրանքային անասուն և 30 հազար հեկտ. մարգագետն-վարելահող: Սովխոզում մոտ յերեք հազար բանվոր կա և բոլորն էլ բացառապես յերիտասարդներ են: Դրանցից մեծ մասը

կոմյերիտներ են, մնացածները — բաարակներ և չքավորներ: Սովխոզի դիրեկտորի ոգնականը և «կըրտսեր հրամանատարական կազմը» կոմյերիտներ են: Սովխոզի համար յերիտասարդությունից բանվորների ընտրությունը կատարել են կոմյերիտ-շրջկոմները: Հենց նոր կազմակեղվված սովխոզում, — չնայած հսկայական դժվարություններին, բնակարանների բացակայության (ապրում են վրանների տակ), աննդի պակասության — աշխատանքի արտադրողականությունը և կարգապահությունը շատ բարձր են. զարնանացանի պլանը կատարված է 220%-ով: Այժմ կառուցվում են պանրի, յուղահան, ոճառի գործարաններ և ձեռնարկներ տվարոգ (վոչ յուղագուրկ ժափիկ) պատրաստելու համար: Սովխոզը անշուշտ հանդիսանալու յե մի լաբորատորիա և բազա՝ նրա շուրջը կոլխոզներ կազմակերպելու համար:

Սամարի կոմյերիտությունը այդ սովխոզն ամբարանդելու համար իր ուժերով հավաքել է մի քանի հազար ուուրի:

Ահա ձեզ կոմյերիտության նախաձեռնության ելի նոր կենդանի որինակներ:

Պլիմովսկու (Սամարի ոկրուզի Բուզուլուկսկու շրջան) կոլխոզի բջջի կոմյերիտականների մի խումբ վորոշում է կազմակերպել գոմ: Հարցը դնում են կոմյերիտութենական ժողովում: Բջիջը վորոշում է վերցնել շեֆություն կոլխոզի կենդանբուծության վրա և առաջին հերթին կառուցել գոմ: «Գոմի համար հարմար տեղ ընտրել շատ դժվար էր: Կոլխոզում հարմար տեղ չկար: Տեղի վորոնման համար ծախսվեց մի ամբողջ որ: Կոլխոզնիկներից մեկը ուներ մի մեծ

գում, վորը հին ու քայքայված եր: Այդ գումը դարձավ կոմյերիտ-կոլեկտիվի անասունների գում:

Յերեք որում գումը կառուցելու իր խոստումը յերիտասարդութունը կատարեց: Գումը ընդհանուր ուժերով արդեն կառուցված ե: Դարբասների վերևից գամված ե հպարտ ցուցանակ «Յերիտասարդական կոլեկտիվի գում»: Շենքի վրա ծածանվում ե կարմիր դրոշը:

Բակում և գումում մաքրութուն ե և կարգ ու կանոն: Իր բախտին թողված ջրհորը մաքրված ե: Որապահության և անասուններին խնամելու համար գումին կցված ե կոմյերիտականների մի խումբ: Տղաները յերբեմն հավաքվում և քննում են, թե հետո ինչ պետք ե անել:

Գումում աշխատող խումբը ունի սև և կարմիր հաշվառման սոցմրցման տախտակ արհեստանոցներում: Գումում բոլոր աշխատողները իրենց հայտարարել են հարվածայիններ:

Յերիտասարդների կազմակերպված այդ առաջին գումը շարժման մեջ դրեց մնացած բոլոր կոմյերիտականներին և յերիտասարդներին: Մի քանի ժամանակից հետո «Իեռատի» կոչվող մասում, վորտեղ վերակազմումից հետո ստեղծված ե ցեխային բլիճ, կառուցվեց ելի յերիտասարդների անասունների մի նոր գում»:^{*}

«Կարմիր Հոկտեմբեր» արտելում կոմյերիտականները (նրանք ընդամենը 6 հոգի յեն) արտադրական խորհրդակցության ոգնությամբ համայնացրել են 25 յեղ, 4 ազնվացեղ կով և կազմակերպել են ազնվացեղ անասունների բուժարան:

* «Սրեդնե-Վոլոսկիյ Կոմսոմոլեց» թերթ, մարտ 1930 թ.

Կոմյերիտականների նախաձեռնությամբ կառուցվում ե նոր տաք և ընդհանուր գում:

Թռչնաբուծությունը և կենդանաբուծությունը ամբողջապես ընկած են կոմյերիտների ուսերի վրա: Ինչպե՞ս վարվել այն: կենդանաբուծության հետ, վորը մնում ե կոլխոզի անդամների անհատական ոգտագործման համար:

Միայլ և ժողովրդական տնտեսության համար վնասակար կլինեն, յեթե այդ անասունների տված մթերքները ամբողջապես սպառեյին այդ տնտեսությունները, վոչինչ չհանելով շուկա:

Մի կով ունեցող տնտեսությունները (վորոնց կովերը չեն հանրացված) շուկա եյին հանում խորհրդային Միության ամբողջ ապրանքային կենդանաբուծության (յուղ, կաթ, միս և այլն) հսկայական մասը:

Յեթե այժմ այդ մասը դուրս ընկնի, ապա դա կլինի ուժեղ վնաս, ինչպե՞ս քաղաքի մատակարարման, այնպես ել արտահանման համար:

Այդ պատճառով ել գյուղատնտեսական կոոպերացիայի կոնտրակտացիայի միջոցով պետք ե ուժեղացնել կոլխոզի անդամների կենդանաբուծական մթերքների ապրանքայնությունը: Կոլխոզներն ամեն կերպ պետք ե նպաստեն փոքր անասունների, յուղի, կաթի, ձվի և հավերի կոնտրակտացիային և այդ մթերքների շուկային սպառման ավելացման:

Կոլխոզը պարտավոր ե հանդես գալ վորպես խոշոր կենդանաբուծության իսկական կազմակերպող, այդպիսին ստեղծելով հանրացված (կանոնադրությամբ) և կոլխոզների անդամների մոտ մնացած ապրանքամթեր-

քային անասունների հաշվից և նմանապես կոլխոզների և անհատ-գյուղացիների մոտ յեղած փոքր անասունները կոնտրակտացիայի յենթարկելով և ձեռք բերելով:

ԿԵՐԻ ՊՐՈՒԼԵՄԸ ՅԵՎ ՄԻԼՈՍԸ

Առանց կերի բազա ստեղծելու, անհնար է կենդանաբուծութայան հաջող զարգացում այս կամ այն չափով: Դրա համար ել կոլխոզների և գյուղական կոմյերիտների մարտական խնդիրը հանդիսանում է հանրացված կերի բազա ստեղծելը:

Այդ աշխատանքը պետք է առաջին հերթին ընթանա սիլոսների մասսայական կառուցման զարգացման, կուլտուրական և վայրի բույսերի սիլոսացման, խոտերի և արմատապտուղների ցանքսի զարգացման, արոտատեղերի և մարգագետինների լավացման ամենահասարակ միջոցառումների (ցաքանում, մամուռներից, հողաթմբերից և մացառներից մաքրում, պայքար ճահճանալու դեմ) անցկացման գծով:

Հարթավայրային շրջաններում (Կազակստան, Կիրգիզստան, Բաշկիրստան, Կալմիկստան) կոմյերիտմիութայան մարտական խնդիրն է ստեղծել խոտիդարմանի բազա վորպես ապահովագրում կերի սովից, վորը տարեկան հարյուր հազարավոր գլուխ անասուններ է վոչնչացնում:

Կերի բազա ստեղծելու գործում ամենավճռականը կերի սիլոսացումն է: Պրոֆեսոր Բոգաևսկին իր «Կերի սիլոսացումը» գրքում ասում է, վոր.

«Սիլոսացումը գիժ խոտը դարձնում է լավ կեր և ամենեց լավ ապահովում է ցանովի խոտերի, կերի բույսերի բարձր բերքը: Սիլոսացման միջոցով ամեն

տեսակի շրաբույսը, նույնիսկ այնպիսին ել, վորն իր բնական վիճակում վատ է ուտում կամ բոլորովին չի ուտում կենդանին... կարելի յե դարձնել հրաշալի հյութառատ կեր, վորը հեշտությամբ պահվում է յերկար ժամանակով:

Այդ կերով տնտեսությունները կարող են ոգավել վոչ միայն աշնանը և ձմռան, այլ նմանապես գարնան և նույնիսկ ամռան, մի խոսքով բերքից բերք:

Շատ բույսեր, որինակ, յեգիպտացորենը, տալիս են հսկայական քանակությամբ կանաչ մասսա, վորը սովորաբար ոգաագործում են միայն ամառը, վորովհետև յեգիպտացորենից խոտ չի կարելի ստանալ, յեթե սպասենք բույսի լիակատար հասունալուն և ավելի շատ բերք ստանալուն: Իսկ սիլոսացման միջոցով մենք կարող ենք հյութալի վիճակում պահել հիշյալ բույսերի ամբողջ բերքը: Ցողունները, տերևները և այլն բոլորն ել սիլոսացվում են, վորից ստացվում է հրաշալի կեր, առանձնապես կաթնատու, չաղանալու ընդունակ կենդանիների և ջահելների համար:

Սիլոսացման միջոցով բանջարանոցային մնացորդները լիովին ոգաագործվում են վորպես հյութառատ կեր ձմեռ ժամանակ:

Տնտեսութայան մեջ կերի սիլոսացման կիրառումը լուծում է անասնապահութայան համար վերին աստիճանի կարևոր հարցը անասուններին գարնանը կերակրելու մասին, վորովհետև նա ազատ կերպով կաբող է փոխարինել արոտատեղերը, մարգագետինները մինչև խոտի նոր բերքը:

Սիլոսացման յենթարկված կերի առկայությունը տնտեսութայան մեջ հրաշալի կերպով լուծում է կեն-

դանիններին ամառը կեր տալու հարցը այնտեղ, վորտեղ չկան արոտատեղեր, մարգագետիններ, վորովհետև կենդանիներն ամառն ել հրաշալի կերպով ուտում են սիլոսացման յենթարկված կերը:

Միլոսացումը հնարավորութունն է տալիս պահել 4—5 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն այնտեղ, վորտեղ մեծ դժվարությամբ կերակրվում եր մեկը:

«Միլոսը կիսով չափ լուծում է ուժեղ կերի բազա ստեղծելու խնդիրը: Իդուր չե, վոր ԽՍՀՄ Հողօրդկումը այս տարի առաջադրում է հեղափոխական համարձակ այսպիսի մի խնդիր — ստեղծել մի միլիոն սիլոսային փոսեր և հորեր:

Միլոսը գորեղ գենը է գյուղատնտեսության վերակառուցման համար: Տնտեսության սիլոսային սիստեմը անհատականների կողպերացման հասարակ ձևերից տանում է դեպի խոշոր կոլտնտեսությունը: Միլոսը կոլխոզների տնտեսական ուժը ամրապնդելու հսկայական մի միջոց է:

Միլոսը նոր գործ է: Հարկավոր են սիլոսը գյուղատնտեսության մեջ մացնող ենտուզիաստներ: Հարկավոր է մարտական, նախաձեռնողական, յեռանգազին այնպիսի մի կազմակերպություն, վորն իր վրա վերցնի սիլոսի ճանապարհը թմբերից, բթության, անշարժության և անշնորհքության ու յետամնացության խոչնդոտներից մաքրելու գործը: Այդպիսի կազմակերպություն պետք է հանդիսանա կոմյերիտմիությունը: Կոմյերիտմիությունն իր յուրաքանչյուր գյուղական բլիշը պետք է դարձնի սիլոսացման գործի նախաձեռնող:

Հաշվենք մեր ուժերը. գյուղում ունենք 25.000 կոմյերիտ-բլիշ: Հարկավոր է փորել մի միլիոն սիլո-

սային փոս. նշանակում է յուրաքանչյուր բլիշ պետք է ստեղծի 40 հոր: Միթե դա ուժերից վեր չե:

Իհարկե, ուժերից վեր է, յեթե մտածենք, վոր յուրաքանչյուր բլիշ իր ձեռքերով պետք է շրջակայքում փորի 40 հոր, նրանց մեջ լցնի կեր և պահպանի դրանք: Այդպիսով մենք վոչինչ ել չենք ձեռք բերելու: Այդ ձևով հարկավոր ել չե գործել: Անհրաժեշտ է, վորպեսզի յուրաքանչյուր բլիշ հանդիսանա սիլոսացման խթան, առաջ մղող, սիլոսացման շուրջը կոլխոզնիկներին և անհատականներին կազմակերպող: Դա նշանակում է, վոր ամեն տեղ և ամենուրեք — գյուղխորհրդում, կոլխոզի վարչության մեջ, արտադրական խորհրդակցություններում, ընկերություններում, ժողովներում՝ գյուղական բոլոր կազմակերպություններում կոմյերիտ-բլիշը սիլոսի մասին հարց է դնում, ագիտացիա յե մղում նրա ոգտին, աշխատում է իր գործողության շրջանում անպայման ստեղծել 40 հոր և փոս: Բլիշն որինակ է ցույց տալիս, ինքն իր ուժերով ստեղծելով մի քանի սիլոսային կոմյերիտական ցուցադրական հոր: Բլիշը պատասխանատու է յե 40 հոր ստեղծելու համար: Շրջկումը պատասխանատու յե շրջանում սիլոսացում ստեղծելու համար, նա այդ խնդրում առաջ է մղում շրջանային բոլոր կազմակերպությունները: Նա կանոնավոր կերպով բլիշներից տեղեկություն է ստանում հորերի կազմակերպման մասին: Նա աշխատում է, վոր սիլոսն ընդհանուր ընդունելություն գտնի: Կոմյերիտմիությունը ամբողջ բատրակ-չքավոր յերիտասարդության կազմակերպողն է սիլոսացման աշխատանքի շուրջը: Միթե դա ուժերից վեր է: Իհարկե վոչ:

Հենց ինքը սխրոսացման տեխնիկան այնքան ել բարդ չէ: Սակայն սխրոսացումը, վորպես նոր գործ, պահանջում է կադրերի պատրաստում: Հարկավոր է անցկացնել կարճ դասընթացների մի ամբողջ շրջան, դասընթացներում հազարավոր կոմյե-րիտների դարձնել սխրոսի պրոպագանդիստներ և տեխնիկներ: Իսկ միթե դա ուժերից վեր է. իհարկե վեր չէ»: («Комсомольская Правда»-ի 1930 թ. մայիսի 6-ի դիմումից):

ԿՈՒՆՈՉԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կոլխոզները բառիս բուն իմաստով շնչակտուր են լինում կոլեկտիվ տնտեսութայն գրագեա կադրերի-կազմակերպիչների պակասությունից, տեխնիկների և մասսայական կվալիֆիկացիայի մասնագետների—տրակտորիստների, մեքենավարների, փականագործ-ների, դարբինների, ատաղձագործների և այլն պա-կասությունից: Այդ պատճառով ել կոմյերիտմիութայն գլխավորապես խնդիրներից մեկը կոլխոզներում հանդիսանում է պայքարը հանուն վորակավոր կադ-րերի պատրաստման կոլխոզային յերտասարգություն-ից, ամեն տեսակի պրոֆտեխնիկական դասընթաց-ներ կազմակերպելը, ահտիվ մասնակցությունը, կոլ-խոզային յերիտասարգութայն ինչպես ցերեկային, այնպես ել իրիկնային պրոֆտեխնիկական դպրոցների կոմպլեկտացման, վերակառուցման և շինարարութայն գործին, բրիգադային և անհատական աշակերտութայն սխտեմի ծավալումը և զարգացումը:

Կոմյերիտմիութայն կազմակերպությունների լուրջ ուշադրությունը պետք է դարձնել սրինակելի խոշոր

սովխոզների և կոլխոզների վրա, վորոնք, ըստ Համ.ԿԿ(Բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշ-ման, «պետք է ծառայեն վորպես մասսայական դպրոց խոշոր տնտեսութայն նոր պրակտիկ-կառուցողների համար, վորոնք սովխոզային և կոլխոզային աշխա-տանքի փորձով ուսումնասիրած լինեն ավելի կատա-րելագործված մեքենաների, գյուղատնտեսական ար-տադրութայն և աշխատանքի կազմակերպման, ագրո-տեխնիկական կատարելագործված/պրիոմների, քիմիայի ոգտագործման և այլն ձևերի գործադրումը»:

Կոմյերիտմիությունը պետք է աշխատի վորքան հնարավոր է շուտ կոլխոզներին և սովխոզներին կից կազմակերպել կոլխոզային աշակերտութայն դպրոցներ:

ԿՈՒՆՈՉԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Մինչև հիմա գյուղացիական յերիտասարգութայն դպրոցները այնպիսի դպրոցներ էին, վոր պատրաս-տում էին այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ էին աշխատել միայն մանր, անհատական գյուղացիական տնտեսություններում: Այդ պատճառով ել 1930 թ. փետրվարի 5-ին Լուսժողկոմը վորոշեց հիմնականորեն վերակառուցել գյուղյերիտ դպրոցները և նրանց դարձ-նել կոլխոզային յերիտասարգութայն դպրոցներ:

Այժմ կոլյերիտդպրոցները դառնում են կոլխոզ-ային կազմակերպիչ-պրակտիկներ և մասսայական կվա-լիֆիկացիայի մասնագետներ պատրաստելու հիմնա-կան ձևը:

Կոլյերիտդպրոցների սխտեմում (յեռամյա ցերե-կային, յերկամյա իրիկնային և արագացրած ցերեկա-յին կոլյերիտդպրոցներ) պետք է կենտրոնացվի կոլ-

խողային կադրեր պատրաստելու ամբողջ գործը: Կոլ-
յերիտղալրոցները պետք է դուրս մղեն ամեն տեսակի
կարճատև կուրսերը (տրակտորիստների և այլն),
բռնեն գյուղական յոթնամյա դպրոցների, իննամյակ-
ների, II աստիճանի դպրոցների տեղը և դառնան
բարձրատիպ դպրոցի միակ տեսակը գյուղում:

Համատարած կոլեկտիվացման շրջանների պայ-
մաններում կոլյերիտղալրոցները իրենց ամբողջ աշխա-
տանքը սերտ կերպով կապում են կոլխոզների աշխա-
տանքի հետ և, կարծես թե, դառնում են կոլխողային
միացման ուսումնական արհեստանոցը:

Բոլոր կոլյերիտղալրոցները ձուլվում են տեղե-
րում գոյուլթյուն ունեցող կոլխոզների հետ և իրենց
գյուղատնտեսությունը տալիս են կոլխոզների անբա-
ժանելի ֆոնդին:

Կոլյերիտղալրոցների՝ կոլխոզում կատարելիք աշ-
խատանքի կենդանի մի որինակ հանդիսանում է Սա-
մարի ոկրուզի, Յեկատերինինսկու շրջանի Նատալինս-
կայի կոլյերիտղալրոցը:

Դպրոցն ունի 95 աշակերտ և, վորպես իրավական
անդամ, իր ամբողջ կոլեկտիվով ձուլվել է Նատալինս-
կայի Չապայեվի անվան խոշոր կոլխոզի հետ:

Վորպես անդամավճար նա կոլեկտիվին է ավել իր
ամբողջ տնտեսությունը — 15 հեկտար ցանքադաշտ,
6 հեկտար մրգի այգի, 17 հեկտար բանջարանոց և
20 հեկտար մարգագետին: Բացի դրանից, նա կոլխոզի
անբաժանելի ֆոնդին է հանձնել իրեն պատկանող
յերեք ձին, յերկու կովը, յերկու հորթը, սեպարա-
տորը, «Սակկա» գութանը, յերկու յերկխոփանի գու-
թան, հնձիչները, կալսողները, յերկու շարժային ցա-

նիչները, տրեյերը և ուրիշ այլ գյուղատնտեսական
գործիքներ և մեքենաներ:

Բոլոր կոլյերիտղալրոցականները կոլխոզի վարչու-
թյան հանձնարարությամբ մասնակցում են անչափա-
հասների ուժերից վոչ վեր ընդհանուր կոլխողային
աշխատանքներին:

Նրանց աշխատանքը խիստ կերպով հաշվի յե
առնվում և վճարվում է ընդհանուր հիմունքների հա-
մաձայն, աշխատավարձը մի անգամից տրվում է
աշակերտների ամբողջ կոլեկտիվին և կոլյերիտղալրոցի
ներսում բաշխվում է կենցաղի, սննդի բարելավման,
դպրոցի կահավորման և այլն վրա:

Կոլյերիտղալրոցականները գլխավորապես կատա-
րում են այն աշխատանքները, վորոնք կրում են
ուսումնա-արտադրական բնույթ, որինակ — աշխա-
տանքը փորձադաշտում, այգում, գյուղատնտեսական
բարդ մեքենաների վրա և այլն: Գարնանացանին
պատրաստվելու ժամանակ կոլյերիտղալրոցականները
իրենց ուժերով կազմ և պատրաստ դրության են բե-
րել կոլխոզի բոլոր տրակտորային և շարժային ցա-
նիչները:

Բացի դրանից, վարչության հետ կնքած պայմա-
նագրի համաձայն աշակերտների և ուսուցիչների կո-
լեկտիվն իր վրա յե վերցրել կոլխոզում տարվելիք
կուլտ - կրթական աշխատանքի ղեկավարությունը:
Ինչպես կոլխոզը, այնպես էլ կոլյերիտղալրոցը գոհ են
իրենց փոխադարձ աշխատանքներից:

Կոլխողային յերիտասարդությանը կոլխողային և
սովխողային դպրոցներում ընդգրկելուց զատ, անհրա-
ժեշտ է այնպես անել, վոր նա հնարավորություն

ուենենա իր ուսումը շարունակելու տեխնիկումներում
և բուհերում:

Սակայն պետութիւնը չի կարողանալու բոլորին
եւ ապահովել թոշակներով, և այստեղ կոմյերիտ-
բՆԻՆների խնդիրն է — աշխատել կոլխոզներում ստեղ-
ծել հատուկ թոշակի ֆոնդ, այդ ֆոնդից առաջին հեր-
թին ոգնելով բատրակներին և չքավորներին:

Դա կարելի յետևել հատուկ գանձումներին, մի
քանի հեկտար ուսման ֆոնդի համար մշակելու և
ցանելու, շաբաթօրյակներ կազմակերպելու և այլն
միջոցառումներով:

Ինքը կոլխոզային յերիտասարդութիւնը կոմյերիտ-
բՆԻՆների ղեկավարութեան տակ պետք է այդ գոր-
ծում որինակ ցույց տա կոլխոզիկներին ամբողջ
մասսային:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մոտիկ ժամանակամիջոցում հնարավոր չի լինի
ամբողջ կոլխոզային յերիտասարդութիւնն ընդգրկել
յեղած կոլխոզ-սովխոզային և կոլյերիտդպրոցներում:

Այդ պատճառով էլ, վորպեսզի կոլխոզներում պատ-
րաստել վորքան հնարավոր է ավելի շատ վորակյալ
տշխատավորներ յերիտասարդութիւնից, հարկավոր է
ոգտագործել բոլոր հնարավորութիւնները և, մաս-
նավորապես, լայն կերպով ծավալել գյուղատնտեսա-
կան բրիգադային աշակերտութիւնը, վորը պետք է
ընդգրկի 12—16 տարեկան պատանեկութիւնը: Բրի-
գադային աշակերտութիւն կարելի յետևել և նպատակա-
հարմար է ստեղծել միայն խոշոր, տնտեսապես ուժեղ
կոլխոզներում, մեքենատրակտորային կայաններում

և նմանապես այն կոլխոզներում, վորտեղ կան բավա-
կան խոշոր մեքենայացված ձեռնարկներ (դարբնոց,
վերանորոգման արհեստանոց, ջրաղաց, յուղա-պանրա-
յին, ոճառի, կղմինդրի, տախտակի, կաշու, յերշիկի և այլ
գործարաններ): Բրիգադային աշակերտութիւնը ընդ-
գրկում է ամենաքիչը 15 փոքրահասակ, սովորում է
մշակված ծրագրով, վորը տեսութիւնը կապում է
գյուղատնտեսական արտադրական պրակտիկայի հետ
և աշխատում է վորակավոր մասնագետ բրիգադա-
պետի (գործից ազատված) ղեկավարութեան տակ:

Անհատական աշակերտութիւնը կոլ-
խոզներում, վոր մի շարք ընկերներ առաջարկում են
մտցնել, հարկավոր է վճռականորեն հենց սկզբից,
չընդունել, մերժել, վորովհետև փոքրահասակներին
սովորեցնելու նման ձևը, իր ելութեամբ յետադիմա-
կան է և չի կարող ապահովել կոլխոզների համար
վորակավոր կադրեր այս կամ այն չափով նորմալ
կերպով պատրաստելու գործը:

Անհատական աշակերտութեան դեպքում (վորն
արդեն մերժված է խոշոր արդյունաբերութեան մեջ)
կոլխոզների պայմաններում անհնար է դառ-
նում վորևե ծրագրային ուսուցում, արդեն չենք
ասում այդ ուսման վորակի մասին, վորը հենվելու յե
սովորեցնողների վորակի վրա:

Բացի դրանից, անհատական աշակերտութեան
նպատակահարմարութիւնը ինքնըստինքյան մերժվում
է կոլեկտիվ գյուղատնտեսական արտադրութեան
ամրապնդման, զարգացման և մեքենայացման հեռա-
նկարներով: Այդ հեռանկարներին կարող է համապա-
տասխանել փոքրահասակների միայն կազմակերպված

ուսուցումը կոլյերիտողարոցներում վորպես կոլխոզների ուսուցման-արտադրական ցեխերում և իհավելումն դրա բրիգադային, կոլեկտիվ աշակերտութիւնը, վորը պարտադիր կերպով ուսումը կապում է արտադրական պրակտիկայի հետ:

ԱԿՏԻՎԸ ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական տնտեսութիւնի սոցիալիստական վերակառուցման շրջանի բարդացած պայմաններում կոմյերիտմիութիւնի ահտիվի վրա ընկնում է խոշոր պատասխանատւութիւնը:

Ղեկավարութիւնի վորակից կախում ունի մեր ամբողջ աշխատանքի հաջողութիւնը մե՞ծ մասը:

Նրա համար, վորպեսզի բավարարել այն բարձր պահանջները, վորոնք այժմ ներկայացվում են ղեկավարութիւնի, ահտիվը պետք է իր շարքերում սահմանի բոլորակից պողպատյա կարգապահութիւն, անխոնջ կերպով աշխատի բարձրացնել իր կուլտուր-քաղաքական և ագրոնոմիական մակարդակը, սերտ կերպով կապվի կոմյերիտականների և արտմիութենական յերիտասարդութիւնի (հատկապես բարակ-չքավոր) ներքին մասսաների հետ, լավ գիտենա, թե ինչով է ապրում և շնչում այդ յերիտասարդութիւնը:

Բատրակների և չքավորների միջի լավ ահտիվներին հարկավոր է համարձակորեն և յեռանդով քաշել կուսակցութիւնի մեջ:

Ղեկավարութիւնի մարտունակութիւնից կախում ունի և ամբողջ կազմակերպութիւնի մարտունակութիւնը: Այժմ, դասակարգային պայքարի սրված մոմենտին, գյուղի սոցիալիստական վերակառուցման

գժվարագույն խնդիրների լարված կենսագործման մոմենտին, ղեկավարութիւնից պետք է դեն շարժուվեն բոլոր վիստիողները, թերահավատները, վորոնք անընդունակ են հաստատուն կերպով անցկացնել կուսակցութիւնի գլխավոր գիծը և ոպորտունիստորեն խեղաթյուրում են այն: Նմանապես պետք է դեն շարժուվեն ղեկավարութիւնից և այն բոլորը, վորոնք անընդունակ են համախմբել, կազմակերպել և իրենց յետևից տանել բարակ-չքավոր և միջակ յերիտասարդութիւնի ամենալայն մասսաները:

Ղեկավարութիւնի գլխավոր մեթոդը վոչ թե շրջաբերականն է, վոչ թե թուղթը, այլ կենդանի ղեկավարութիւնը:

Ահտիվի, բջիջային կազմակերպիչների, հարվածային բրիգադների և նախաձեռնողական խմբերի խորհրդակցութիւններ կոմյերիտ-աշխատանքի և կոլխոզչինարարութիւնի առանձին հարցերի առթիվ, կանոնավոր, կենդանի կապ, բջիջների կենդանի սպասարկում և աշխատանքի փորձի փոխանակում — ահա թե այժմ ինչին պետք է կառչել:

Շրջել բջիջները հարկավոր է այնպես, վոր դրանից ոգուտ ստացվի: Թե չե մեզ մոտ սովորաբար այդպես չի լինում: Գայիս է շրջանային վորևե «առաջնորդ» բջիջում, փայլում է իր պորտֆելով, «սարսափելի լուրջ տեսքով» ջրջրում է բջիջի «գործերը»: Այնուհետև հանդես է գալիս և տեղում հեղափոխական ճռճուսն ֆրագների մի ամբողջ տարափ, «հուպ տալիս» և գնում... Իսկ գործը մնում է առաջվանը: Կան և այնպիսի «գործնական» «ղեկավարներ»,

վորոնք «ընդունակություն են ունենում» մի որվա մեջ լինել տաս բլլում:

Յեթե յեկել ես բլիշ, բարի յեղիր նախ և առաջ իմանալ, թե ինչով ե ապրում և շնչում բլիշը, ինչով ե նա հիվանդ. այնուհետև բացատրիր, գործով աղաներին ցույց տուր, թե ինչպես պետք ե աշխատել և մի գնա, մինչև վոր. չհամոզվես, վոր գործը կարգի յե ընկել և «մարդիկ» տեղից շարժվել են:

ՊԱՅՔԱՐ ԿՈՒՆՈՉՈՒՄ ՆՈՐ ԿԵՆՅԱՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շատ ընկերներ թերագնահատում են կուլտ-կենցաղային և քաղ-կրթական աշխատանքը կոլխոզում և հեռու յեն քաշվում նրանից, համարելով, վոր դա «լուրջ գործ չե»:

Այնինչ այդ աշխատանքը հսկայական նշանակություն ունի կոլխոզի տնտեսական և քաղաքական ամրապնդման համար:

Կոլխոզնիկները աշխատանքի արտադրողականության բարձրացումը, նրանց կողմից ստեղծագործական նախաձեռնություն իհայտ բերելը, կոլխոզի հաշող զարգացումը համարյա ամբողջապես կախում ունեն նրանից, թե կենցաղային ինչպիսի պայմաններում են ապրում կոլխոզի անդամները և ինչ չափով ե բարձր նրանց կուլտուր-քաղաքական մակարդակը:

Կոլխոզներում ասարվելիք կուլտուրական և քաղ-կրթական աշխատանքների գլխավոր խնդիրները հետևյալներն են. ամեն կերպ լավացնել կոլխոզնիկների կենցաղային պայմանները (անունդը, բնակարանը, բժշկական ոգնությունը և այլն) և դա անել այն հաշվով, վորպեսզի այդ պայմանները նպաստեն աշ-

խատանքի արտադրողականության բարձրացման. վերացնել կոլխոզնիկների (թե կին և թե տղամարդ) տեխնիկական, քաղաքական և ազրոնոմիական անգրագիտությունը և կիսագրագիտությունը. ամեն որ և համառորեն բացատրել հրատապ, փոթորկող հարցերը, կոլխոզային շինարարության հետագա ուղիները, կուսակցության քաղաքականությունը գյուղում. կազմակերպել այնպիսի հանգիստ և խելացի, առողջ գվարձություն, վորը կոլխոզնիկներին համախմբի, քաջալերի և նրանց մեջ զարգացնի կուլեկտիվ համերաշխության զգացմունք:

Այժմ յուրաքանչյուր կոլխոզում ուժեղ կերպով պետք ե կառուցել խրճիթ-ընթերցարաններ, ախումբներ և կարմիր անկյուններ, վորոնք պետք ե դառնան կուլտուրական - մասսայական աշխատանքի կենտրոններ:

Կոլխոզի ամբողջ կուլտ-մասսայական աշխատանքը, սկսած լիկկայանի կրուժոկից, զրույցներից, յերեկույթներից և ներկայացումներից ու վերջացրած յերիտասարդական կոնֆերենցիայով, պետք ե առավելագույն չափերով մտեցնել կոլխոզի առորյա կյանքին և արտադրության, գործնականորեն այն (աշխատանքը) դարձնելով մի հզոր գենք կոլխոզնիկներին և կոլխոզային յերիտասարդությանը կոմունիստական վոզով, սոցիալիստական շինարարության մարտական վոզով և դասակարգային թշնամիներին անհաշտելի կերպով ատելու վոզով դաստիարակելու համար:

Պետք ե կոլխոզների մեջ մտցնել արտադրական դաստիարակության ամենից ավելի արժեքավոր ձե-

վերը, վորոնք կիրառվում են ֆարբիկներում, գործա-
րաններում, ինչպես, որինակ, արտադրական մրցում-
ները (ամենալավ գոմի համար, ամենալավ հարվա-
ծային բրիգադի համար, ամենալավ տրակտորիստի
համար, կոլխոզի զանազան տնտեսական աշխատանք-
ները որինակելի կերպով կատարելու համար և այլն),
ցուցադրական դատեր պրոգնոլոգիկներին, ծուլերին,
կոլխոզային գույքը վատնողներին վրա:

Կուլտուր-մասսայական աշխատանքն իր բոլոր
տեսակներով պետք է հանդիսանա մի սուր զենք,
վորը յետ և մղում մեր դասակարգային թշնամիներ-
ի բոլոր վտանգալիտները և գրոհները, և նմա-
նապես մի միջոց, վորը ամրացնում է կոլխոզները և
բարձրացնում է նրանց տնտեսական արտադրական
մարտունակութունը:

Կուսակցականների խալը կոլխոզներում շատ և
շատ քիչ ու փոքր է: Նրանք համարյա բոլորն ել
զբաղված են կոլխոզային շինարարության տնտեսա-
կան-քաղաքական պատասխանատու բնագավառներում:

Դրա համար ել կոմյերիտմիութունը — կուսակ-
ցության առաջին ոգնականը — պետք է ամբողջապես
իր վրա վերցնի կոլխոզներում տարվելիք կուլտուր-
կենցաղային աշխատանքը, ակտիվորեն մասնակցի
կուլտ-կենցաղային հանձնաժողովների աշխատանքնե-
րին և լիակատար կերպով պատասխանատու լինի այդ
հանձնաժողովների հաջող գործնեյության համար:



25 4лм.

153

Цена 25 к.
О. П. 2.

С 31-1
1115
631

7982

1007



ВЯЧЕСЛАВ К.
Комсомол в борьбе
за колхозы
(пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С С С Р
Москва, центр, Никольская, 10.